Ցկյանս կրթության ծրագիր (ՑԿԾ)
Ուղեցույց 2009թ.
Մաս I Ընդհանուր դրույթներ

Բովանդակություն

1. ՑԿՅԱՆՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ (ՑԿԾ)..... 3
1.Ա. ԻՆՉՊԻՍԻ՞ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՈՒՆԻ ԾՐԱԳԻՐԸ.....5
1.Բ. ԻՆՉՊԻՍԻ՞ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԽԹԱՆՎՈՒՄ.....7
1.Գ. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԸ..... 8
1.Դ. Ո՞ՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ.....9
1.Ե. ՈՎ ԻՆՉ Է ԱՆՈՒՄ 10
1.Զ. ՈՐՈՇ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ.....13

2. ԻՆՉՊԻՍԻ՞ ԿԵՆՍԱՇՐՋԱՆ ՈՒՆԻ ԾՐԱԳԻՐԸ.....14
2.Ա. ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....14
2.Բ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ..... 15
2.Գ. ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՔՆԵՐ..... 15

3. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ.....17
3.Ա. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ.....17
3.Բ. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ.....19

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ 27
4.Ա. ԲՈԼՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌԵԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ...27
4.Բ. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ..... 27
4.Գ. ԱՆՀԱՏՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԸ.....28
4.Դ. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ԷՐԱԶՄՈՒՍ, ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ ԵՎ ԳՐՈՒՆԴՎԻԳ) 32

4.Ե. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 35
4.Զ. ԲԱԶՄԱԿՈՂՄ ԾՐԱԳՐԵՐ, ՑԱՆՑԵՐ, ԶՈՒԳԱՀԵՌ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....37
4. Գ. ԺԱՆ ՄՈՆԵ ԾՐԱԳԻՐ..... 45

5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ ՑԿՅԱՆՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ.....48
5.Ա. Ի՞ՆՉ Է ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ.....48
5.Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ.....51

5.Գ. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ.....53

5.Դ. ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ 54
5.Ե. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....55

Ներածություն

Սույն ուղեցույցը պարունակում է տեղեկություններ, որոնք լրացնում են առաջարկների համար Ցկյանս կրթության ամենամյա ծրագրի (ՑԿԾ) հրավերքը: Դիմողներին խորհուրդ է տրվում նաև այցելել Կրթության, տեսալսողական և մշակութային գործադիր գործակալության կամ համապատասխան Ազգային գործակալության կայք էջը (տես մաս 1.Ե):

Ուղեցույցի նպատակն է՝

- Օգնել հետաքրքրվողներին ֆինանսավորման համար դիմելու և դիմումաձևերը լրացնելու գործում.
- Օգնել դիմողներին իրենց առաջարկների համար համապատասխան բյուջե պատրաստել.
- Պարզաբանել առաջարկների հրավերքի հետ կապված հարցերը.
- Տրամադրել գործնական տեղեկատվություն, որը կարող է դիմողների համար օգտակար լինել դիմելու և ընտրության գործընթացի տարբեր փուլերում:

1. ՑԿՅԱՆՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ (ՑԿԾ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Ցկյանս կրթության ոլորտում համայնքային գործողությունների ծրագրի (Ցկյանս կրթության ծրագիր – ՑԿԾ)[1] նպատակն է՝ ցկյանս կրթության միջոցով խթանել ԵՄ զարգացմանը, որպես գիտելիքների առաջադեմ հասարակություն՝ կայուն տնտեսական աճով, ավելի շատ ու ավելի գրավիչ աշխատատեղերով, ինչպես նաև հասարակական ավելի ամուր միասնականությամբ: Հատկապես, այն նպատակ ունի ամրապնդել փոխանակումները կրթության և ուսուցման հաստատությունների ու համակարգերի միջև, համագործակցությունն ու շարժունությունը ԵՄ տարածքում, այնպես, որ դրանք դառնան որակի համաշխարհային չափանիշ: Այս ձևով այն փորձում է լուծել մասնակից երկրներում կրթության և ուսուցման համակարգերի արդիականացման ու վերափոխման հարցը, հատկապես, Լիսաբոնի օրակարգային ռազմավարական նպատակների համատեքստում, իսկ եվրոպական ավելացված արժեքն անմիջականորեն վերաբերվում է անհատ քաղաքացիներին, ովքեր մասնակցում են շարժունության և համագործակցության այլ գործողություններին:

Ստորև բերված են ծրագրի առանձնահատուկ հիմնախնդիրները: Դրանք ցույց են տալիս, որ ՑԿԾ խթանում ու լրացնում է անդամ և մասնակից պետությունների կողմից իրականացվող գործողությունները՝ միաժամանակ հարգելով կրթության ու ուսուցման համակարգերի բովանդակության նկատմամբ վերջիններիս պատասխանատվությունը, ինչպես նաև դրանց մշակութային և լեզվական բազմազանությունը:

ՑԿԾ կշարունակվի յոթ տարի (2007-2013): Այդ ժամանակահատվածի համար նախատեսված ընդհանուր բյուջեն կազմում է 6.970 միլիոն եվրո:

[1] Ծրագիրը ստեղծվել է Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի 1720/2006/ԵՀ և 2006թ. նոյեմբերի 15-ի, 24/11/2006թ. OJ L327 որոշումների համաձայն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Ամրապնդել համայնքի սահմաններում կրթության և ուսուցման համակարգերի միջև փոխանակումը, համագործակցությունն ու շարժունությունը

ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. Խթանել որակյալ Ցկյանս կրթության զարգացումը, նպաստել տվյալ ոլորտում բարձր կատարողականությանը, նորարարությանն ու եվրոպական չափանիշների կիրառմանը համակարգերում և գործնականում
2. Նպաստել Ցկյանս կրթության համար եվրոպական տարածքի ստեղծմանը
3. Օգնել բարելավել անդամ պետություններում առկա Ցկյանս կրթության հնարավորությունների որակը, գրավչությունն ու մատչելիությունը
4. Ամրապնդել Ցկյանս կրթության դերը սոցիալական միասնականության, ակտիվ քաղաքացիության, միջմշակութային երկխոսության, գենդերային հավասարության ու անձնական բավարարվածության գործում
5. Խթանել ստեղծագործական միտքը, մրցունակությունը, աշխատունակությունն ու ձեռնարկատիրական ոգու զարգացումը
6. Նպաստել Ցկյանս կրթության մեջ բոլոր տարիքային խմբերի, ներառյալ հատուկ կարիքավոր ու ֆիզիկական թերություններ ունեցող մարդկանց մասնակցության բարելավումը, անկախ նրանց սոցիալ-տնտեսական ծագումից
7. Խթանել լեզուների ուսումնասիրությունն ու լեզվական բազմազանությունը
8. Նպաստել Ցկյանս կրթության նորարարական տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված բովանդակության, ծառայությունների, մեթոդների ու գործնական կիրառման զարգացմանը
9. Ամրապնդել Ցկյանս կրթության դերը եվրոպական քաղաքացիության գաղափարի ձևավորման մեջ, որը հիմնված է մարդու իրավունքների ու ժողովրդավարության ընբռնման և հարգանքի վրա, ինչպես նաև ժողովուրդների ու մշակույթների նկատմամբ հանդուրժողականության և հարգանքի խթանման վրա
10. Խթանել Եվրոպայում ՄԿՈՒ բոլոր ոլորտների որակի ապահովման գործում համագործակցությունը
11. Նպաստել արդյունքների, նորարարական արտադրանքների ու գործընթացների լավագույնս կիրառմանը, ինչպես նաև Ցկյանս կրթության ծրագրի ուշադրության կենտրոնում գտնվող ոլորտում իրականացնել լավագույն փորձի փոխանակում, որի նպատակն է՝ բարելավել կրթության և ուսուցման որակը

ՑԿԾ որոշման Հոդված12-ի համաձայն, ծրագիրը պետք է նաև աջակցի ԵՄ հորիզոնական քաղաքականությունների զարգացմանը, հատկապես՝

(ա) խթանելով Եվրոպայում մշակութային և լեզվական բազմազանության կարևորության, ինչպես նաև ռասսայական խտրականությունը, նախապաշարմունքն ու օտարատյացությունը վերացնելու անհրաժեշտության գիտակցումը.

(բ) հատուկ կարիքավոր սովորողների կարիքների բավարարման միջոցով, և, հատկապես, նպաստելով կրթության ու ուսուցման հիմնական հոսքի մեջ նրանց ինտեգրմանը.

(գ) կանանց և տղամարդկանց հավասարության խթանման ու բոլոր տեսակի խտրականությունների դեմ պայքարի միջոցով՝ սեռի, ռասսայական կամ ազգային պատկանելության, կրոնի կամ հավատալիքների, ֆիզիկական թերությունների, տարիքային կամ սեռական կողմնորոշման հետ կապված:

1.Ա. ԻՆՉՊԻՍԻ՞ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՈՒՆԻ ԾՐԱԳԻՐԸ

Ցկյանս կրթության ծրագիրը բաղկացած է՝

- ոլորտային չորս ծրագրերից, որոնք համապատասխանաբար նվիրված են դպրոցական կրթությանը (Կոմենիուս), բարձրագույն կրթությանը (Էրազմուս), մասնագիտական կրթությանը (Լեոնարդո դա Վինչի) և մեծահասակների կրթությանը (Գրունդվիգ)
- «Տրանսվերսալ ծրագրից», որն ուղղված է միջհատվածային ոլորտներին (ցկյանս կրթության ոլորտում քաղաքականության վերաբերյալ համագործակցությանը և նորարարությանը, լեզուներին, նորարարական տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, արդյունքների հրապարակմանն ու կիրառմանը).
- դասավանդմանը, գիտական հետազոտությանը, եվրոպական ինտեգրման արտացոլմանը և եվրոպական գլխավոր հաստատություններին և ասոցիացաներին աջակցող ծրագրից (ժան Մոնե Ծրագիր):





«ԿՈՄԵՆԻՈՒՍ» ծրագիր Դպրոցական կրթություն	«Կոմենիուս» ծրագրի ուշադրության կենտրոնում կրթության առաջին փուլն է. նախադպրոցական և տարրական դպրոցից՝ մինչև միջնակարգ դպրոց: Այն վերաբերում է կրթական համայնքի բոլոր անդամներին՝աշակերտներ, ուսուցիչներ, տեղական ղեկավարություն, ծնողների միություններ, հասարակական կազմակերպություններ, ուսուցիչների վերապատրաստման հաստատություններ, համալսարաններ և մնացած ամբողջ կրթական անձնակազմը:
«ԷՐԱԶՄՈՒՍ» ծրագիր բարձրագույն կրթություն	«Էրազմուսը» ԵՄ կրթության ու ուսուցման ծրագիր է, որն ուղղված է Եվրոպայի տարածքում բարձրագույն կրթության ոլորտում շարժունությանը և համագործակցությանը: Ծրագրի բազմազան գործողություններն ուղղված են ոչ միայն արտասահմանում սովորել և աշխատել ցանկացող ուսանողներին, այլև բարձրագույն կրթության ոլորտի դասախոսներին և ձեռնարկությունների աշխատողներին, ովքեր մտադիր են դասավանդել արտասահմանում և բարձրագույն կրթության ոլորտում աշխատողներին, ովքեր ցանկանում են վերապատրաստվել արտասահմանում: Բացի այդ, «Էրազմուսը» նպաստում է, որպեսզի բարձրագույն ուսումնական հաստատությունները համագործակցեն ինտենսիվ ծրագրերի, ցանցերի ու բազմակողմ ծրագրերի միջոցով, ինչպես նաև դուրս գան գործարար աշխարհ:
«ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ» ծրագիր Մասնագիտական կրթություն և ուսուցում	«Լեոնարդո դա Վինչի» ծրագիրը կապ է հաստատում մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում քաղաքականության ու գործնականի միջև կապ հաստատել: Ծրագրերը տարբեր են. անհատներին իրենց ունակությունները, գիտելիքներն ու հմտություններն արտասահմանում բարելավելու հնարավորություն տվող ծրագրերից՝ մինչև Եվրոպայի ողջ տարածքում ՄԿՈՒ շահառուների միջև համագործակցության ապահովներ, որոնց նպատակն է՝ ամրապնդել ՄԿՈՒ համակարգերի գրավչությունը, որակն ու կատարողականությունը:
«ԳՐՈՒՆԴՎԻԳ» ծրագիր Մեծահասակների կրթություն	Ուղղված է մեծահասակների կրթության բոլոր ձևերի հետ կապված դասավանդման և ուսումնառության կարիքներին, որոնք անպայմանորեն մասնագիտական բնույթ չունեն, ինչպես նաև մեծահասակների համար ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ներունակ (ինֆորմալ) կրթական նման հնարավորություններ ապահովող կամ խթանող հաստատություններին ու կազմակերպություններին, այդ թվում՝ անձնակազմի նախնական և աշխատատեղում կազմակերպվող ուսուցման մեջ ներգրավվածները:
Գլխավոր միջոցառում 1 Ցկյանս կրթության ոլորտում քաղաքականության վերաբերյալ համագործակցություն և նորարարություն	Քաղաքականության վերաբերյալ համագործակցության և նորարարության միջոցառումներ. խթանում է կրթության և մասնագիտական ուսուցման մասնագետների ուսումնական այցերը, ինչպես նաև եվրոպական մակարդակում այդ ոլորտներում ուսումնասիրություններն ու համեմատական հետազոտությունները: Գլխավոր հիմնախնդիրները նպատակ ունեն աջակցել ցկյանս կրթության ոլորտում քաղաքականության զարգացմանը և համագործակցությանը, ինչպես նաև ապահովել բավարար քանակությամբ համեմատական տվյալներ, վիճակագրություն և վերլուծություններ:
Գլխավոր միջոցառում 2 Լեզուներ	Լեզուների բազմազանությունը բնորոշ է Եվրոպային և կարող է խթանել տնտեսական աճը, անհատական զարգացումն ու միջմշակութային երկխոսությունը: ԵՄ միջոցառումները նպատակ ունեն խթանել լեզուների իմացությունն ու լեզուների բազմազանությունը Եվրոպայում:
Գլխավոր միջոցառում 3 Տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված բովանդակության մշակում	ԵՄ միջոցառումները նպատակ ունեն միավորել Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հզորությունը՝ նորարարական կրթություն և ուսուցում ապահովելու, ցկյանս կրթությունն ավելի հասանելի դարձնելու ու կառավարման առաջադեմ համակարգեր մշակելու գործում աջակցելու համար:
Գլխավոր միջոցառում 4 Արդյունքների հրապարակում և կիրառում	Ցկյանս կրթության ծրագրի կողմից ֆինանսավորված միջոցառումներն ու ծրագրերը կամ նախկին ծրագրերն առավելագույնս արդյունավետ դարձնելու համար՝ հավանական կիրառողները պետք է հնարավորին չափ տեղեկացված լինեն: Ուստի անհրաժեշտ է, որպեսզի ԵՄ կողմից ֆինանսավորված ցանկացած ծրագրի արդյունքները հրապարակվեն և կիրառվեն:

«Ժան Մոնե» միջոցառում	«Ժան Մոնե» ծրագիրը խթանում է եվրոպական ինտեգրման վերաբերյալ դասավանդումը, գիտական հետազոտությունն ու քննարկումներն ամբողջ աշխարհի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Բոլոր հինգ մայրցամաքներում միասին ծրագիրն ամեն տարի ներառում է 250 000 ուսանող:
Որոշակի հաստատություններին օժանդակող դրամաշնորհների տրամադրում	Տրամադրվում են դրամաշնորհներ, որպես օժանդակություն, եվրոպական շահերից բխող որևէ նպատակ հետապնդող հետևյալ հաստատությունների որոշակի գործառնական և վարչական ծախսերը հոգալու համար. Եվրոպայի քոլեջ, Եվրոպական համալսարանի ինստիտուտ, Հասարակական կառավարման եվրոպական ինստիտուտ, Եվրոպական իրավունքի ակադեմիա, Հատուկ կարիքների կրթության զարգացման եվրոպական գործակալություն, Եվրոպական ուսուցման միջազգային կենտրոն (CIFE):
Եվրոպական այլ հաստատությունների օժանդակող դրամաշնորհների տրամադրում	Տրամադրվում են դրամաշնորհներ, որպես օժանդակություն, կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական հաստատությունների կամ ասոցիացաների գործառնական և վարչական ծախսերը հոգալու համար:

1.Բ. ԻՆՉՊԻՍԻ՞ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՆ ԽԹԱՆՎՈՒՄ

ՑԿԾ խթանում է հետևյալ **միջոցառումները** .

Կանոնադրություն	Գրավոր փաստաթուղթ, որը շնորհվում է Եվրոպական Հանձնաժողովի կողմից և իրավասու բարձրագույն ուսումնական հաստատություններին հնարավորություն է տալիս մասնակցել «Էրազմուս» միջոցառումներին: Կանոնադրությամբ սահմանվում են այն հիմնարար սկզբունքները, որոնց հաստատությունը պետք է հավատարիմ մնա բարձրորակ շարժունություն և համագործակցություն ստեղծելիս ու իրականացնելիս, սահմանվում են այն պայմանները, որոնց հաստատությունը համաձայնում է հավատարիմ մնալ՝ բարձր որակի ծառայություններ ու ընթացակարգեր, ինչպես նաև վստահելի և թափանցիկ տեղեկատվություն ապահովելու համար:
Վկայական	Շարժունության վկայականը հաստատության կամ միավորման՝ գերազանց որակի շարժունության միջոցառում իրականացնելու հնարավորության ճանաչումն է: Որակի այս բնութագրի մեջ են մտնում ռազմավարական շրջանակը, որը ներառում է շարժունության միջոցառումը (քաղաքականություն, ռազմավարություն, աշխատանքային ծրագիր), ինչպես նաև շարժունության միջոցառումներ իրականացնելու հաստատության գործառնական և ֆինանսական հնարավորությունները: Այն օգտագործվում է «Էրազմուս» ծրագրում (Էրազմուս միավորման վկայական) և «Լեոնարդո դա Վինչի» ծրագրում (Լեոնարդո դա Վինչի շարժունության վկայական):

Շարժունություն	Որոշակի ժամանակահատված մեկ այլ մասնակից երկրում անցկացնելը՝ ուսումնառության, աշխատանքի, կրթության, դասավանդման կամ ուսուցման կամ դրանց հետ կապված վարչական միջոցառման մասնակցելու նպատակով, որն անհրաժեշտության դեպքում, կարող է ուղեկցվել տվյալ երկրի պետական կամ աշխատանքային լեզվի նախապատրաստական կամ բարելավման դասընթացներով:
Երկկողմ և բազմակողմ գործընկերություն	Տարբեր մասնակից երկրներում հաստատությունների/ կազմակերպությունների միջև ցկյանս կրթության համապատասխան ոլորտում (դպրոցական կրթություն, մասնագիտական կրթություն կամ մեծահասակների համար կրթություն) սովորաբար եվրոպական համագործակցության փոքրածավալ միջոցառումների իրականացման վերաբերյալ երկկողմ կամ բազմակողմ համաձայնություն:
Բազմակողմ ծրագիր	Հստակ և կիրառելի արդյունք ապահովող եվրոպական համագործակցության միջոցառում, որը մշակվել է կազմակերպությունների կամ հաստատությունների ֆորմալ կամ ինֆորմալ խմբի կողմից:
Բազմակողմ ցանց	Ցկյանս կրթության տվյալ ոլորտում, գիտության բնագավառում կամ հատվածում ակտիվ մարմինների ֆորմալ կամ ոչ ֆորմալ միավորումը, որի ուշադրության կենտրոնում տվյալ ոլորտում ռազմավարական քննարկումները, կարիքների վերլուծություններն ու ցանցային միջոցառումներն են:
Միակողմ կամ ազգային ծրագիր	Մեկ հաստատության կողմից կամ միայն մեկ երկրում մշակված միջոցառում, որն ապահովում է հստակ ու կիրառելի արդյունք:
Լրացուցիչ միջոցառումներ	Նպատակ ունեն օժանդակել տարբեր միջոցառումներ, որոնք թեև ոլորտային ծրագրերի գլխավոր գործողությունների մաս չեն հանդիսանում, պետք է հստակորեն նպաստեն ՑԿԾ-ի հիմնախնդիրների լուծմանը:
Դիտումներ և վերլուծություն, ուսումնասիրություններ և համեմատական հետազոտություն	Դիտումների ու վերլուծության նպատակով ծրագրեր, օրինակ՝ ուսումնասիրությունների կամ համեմատական հետազոտության տեսքով:
Դրամաշնորհների տրամադրում	Ֆինանսական աջակցություն Ցկյանս կրթության ծրագրի շրջանակներում տվյալ ոլորտում ակտիվ հաստատությունների կամ ասոցիացաների կանոնավոր գործունեությանը:

Ծրագրի ոչ բոլոր մասերում են առկա գործողությունների այս բոլոր տեսակները:

1.Գ. ՈՐՈՆՔ ԵՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԸ

Ծրագրին կարող են մասնակցել.

- ԵՄ 27 անդամ պետությունները[2]
- Իսլանդիան, Լիխտենշտայնը, Նորվեգիան («EFTA-EEA երկրները», այսինքն այն երկրները, որոնք Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի անդամ են և նաև մտնում են Եվրոպական տնտեսական տարածքի մեջ)
- Թուրքիան
- Խորհրդի 2001/822/ԵՀ որոշմամբ սահմանված «Արտասահմանյան երկրներն ու տարածքները»՝
  - Գրենլանդիան
  - Նոր Կալեդոնիան և կախյալ տարածքները

[2] Ներառում է հետևյալ տարածաշրջանների դիմողներին՝ Կանարյան կղզիներ, Գվադելուպան, Մարտինիկը, Ֆրանսիական Գվիանեան, RՁunion, Ազորյան կղզիներ, Մադեյրան: Մինչ հատուկ ֆինանսական դրույթները կիրառելի են արտասահմանյան երկրների ու տարածքների համար, այս կանոնները նույնպես կիրառելի են այդ տարածաշրջանների համար:

- Ֆրանսիական Պոլինեզիա
- Ֆրանսիայի հարավային և անտարկտիկական տարածքները
- Ուոլիս և Ֆուտունա կղզիները
- Մայոտը
- Սեն Պիեռ և Միքելոն
- Արուբա
- Նիդերլանդներ անթիլյան կղզիներ
- Անգուիլա
- Կայման կղզիներ
- Ֆոլկլենդյան կղզիներ
- Հարավային Ջորջիա և Հարավ Սանդվիչյան կղզիներ
- Մոնտսեռատ
- Փիթկեռն
- Սուրբ Հելենե, Ասենսիոն կղզի, Տրիստան դա Կունյա
- Բրիտանական անտարկտիկական տարածաշրջան
- Բրիտանական հնդկական օվկիանոսի տարածք
- Թերքս և Կայկոս կղզիներ
- Բրիտանական Վիրգինյան կղզիներ

Խորվաթիայի, Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի Հանրապետության և Շվեյցարիայի հետ շարունակվում են բանակցությունները՝ կապված ՑԿԾ-ում նրանց ապագա մասնակցության հետ, որը կախված է այդ բանակցությունների արդյունքից: Մասնակից երկրների թարմացված ցանկը տե՛ս Հանձնաժողովի, Ազգային գործակալությունների (NA) կամ Կրթության, տեսալսողական և մշակութային գործադիր գործակալության (Գործադիր գործակալություն) կայք էջերում:

Ժան Մոնե միջոցառմանը կարող են մասնակցել ՑԿԾ-ին մասնակից բոլոր երկրների կամ ցանկացած այլ («երրորդ») երկրի բարձրագույն ուսումնական հաստատությունները և ասոցիացաները: Երրորդ երկրից մասնակից երկրների հաստատություններն ու ասոցիացաները պարտավոր են ստանձնել բոլոր պարտավորությունները և կատարել ծրագրի որոշմամբ սահմանված անդամ երկրներում գտնվող հաստատություններին և ասոցիացաներին վերաբերող բոլոր առաջադրանքները:

1.Դ. Ո՞ՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ

ՑԿԾ-ին կարող է մասնակցել, ըստ էության, կրթության կամ ուսուցման մեջ ներգրավված ցանկացած անձ.

- Աշակերտները, ուսանողները, փորձնակները և մեծահասակ սովորողները
- Դասավանդողները, վերապատրաստողներն ու ցկյանս կրթության (ՑԿ) ցանկացած ոլորտում ներգրավված մնացած անձնակազմը
- Աշխատաշուկայում գտնվող մարդիկ
- Կրթության կամ ուսուցման ցանկացած ոլորտում կրթական հնարավորություններ ապահովող հաստատությունները կամ կազմակերպությունները
- Տեղական, տարածաշրջանային ու ազգային մակարդակներում ՑԿ ցանկացած առանձին ոլորտի հետ կապված համակարգերի ու քաղաքականությունների համար պատասխանատու անձիք և մարմինները
- Բոլոր մակարդակների ձեռնարկությունները, սոցիալական գործընկերները և նրանց կազմակերպությունները, այդ թվում՝ առևտրային կազմակերպություններն ու առևտրի և արդյունաբերության պալատները
- ՑԿ ցանկացած ոլորտի հետ կապված կողմնորոշում, խորհրդատվություն և տեղեկատվական ծառայություններ մատուցող մարմինները
- ՑԿ ոլորտում գործող ասոցիացաները, ներառյալ՝ ուսանողների, փորձնակների, աշակերտների, դասավանդողների, ծնողների և մեծահասակ սովորողների ասոցիացաները
- Գիտահետազոտական կենտրոններն ու կրթության և ուսուցման հարցերով զբաղվող մարմինները:

- Շահույթ չհետապնդող կազմակերպությունները, կամավոր հիմունքներով աշխատող մարմինները, հասարակական կազմակերպությունները:

Այն հարցի վերաբերյալ, թե ծրագրի որ հատվածին ովքեր կարող են մասնակցել, կարելի է գտնել սույն ուղեցույցի առանձին մասերում:

1.Ե. Ո՞Վ ԻՆՉ Է ԱՆՈՒՄ

Եվրոպական Հանձնաժողովը (Կրթության և մշակութային հարցերով զբաղվող Գլխավոր Տնօրենությունը) պատասխանատու է ողջ ՑԿԾ-ի արդյունավետ ու արդյունավոր իրականացման համար: Իր առաջադրանքների իրականացման գործում Հանձնաժողովին աջակցում է ՑԿԾ Հանձնաժողովը, որի կազմում են անդամ և մասնակից այլ երկրների ներկայացուցիչներ և ղեկավարվում է Հանձնաժողովի կողմից:

Ծրագրի գործառնական կառավարումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից, որը սերտորեն համագործակցում է Ազգային գործակալությունների (յուրաքանչյուր երկրում մեկ կամ ավելի) և Բրյուսելում Կրթության, տեսալսողական ու մշակութային հարցերով զբաղվող գործադիր գործակալության հետ (Գործադիր գործակալություն):

Ազգային գործակալություններ (ԱԳ). Մասնակից երկրների ազգային պատասխանատուները ստեղծել են **Ազգային գործակալություններ**, որոնց նպատակն է՝ խթանել ազգային մակարդակում ծրագրի, այսպես կոչված, **«ապակենտրոնացված»** գործողությունների համակարգված կառավարումը:

Ազգային պատասխանատուները վերահսկում ու ղեկավարում են Ազգային գործակալությունները, ինչպես նաև վստահեցնում Հանձնաժողովին՝ ազգային գործակալությունների կողմից ծրագրի ապակենտրոնացված գործողությունների համար նախատեսված եվրոպական համայնքային ֆոնդերի պատշաճ ղեկավարման մասին:

Ազգային գործակալությունները կարևոր դեր են խաղում ծրագրի գործնական իրականացման գործում, քանի որ նրանք պատասխանատու են ազգային մակարդակում ծրագիրը մասսայականացնելու, արդյունքների հրապարակմանն ու կիրառմանը օժանդակելու և, հատկապես, ծրագրի ապակենտրոնացված գործողությունների ամբողջ ընթացքի ղեկավարման համար:

- Առաջարկների համար ազգային մակարդակում հրավերքների կամ ՑԿԾ-ի վերաբերյալ առաջարկների եվրոպական հրավերքի ընդունման վերջնաժամկետի հրապարակումը
- ծրագրի գործողությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում ու դրանց խթանում, հնարավոր դիմողներին խորհրդատվության տրամադրում
- դրամաշնորհների համար դիմումների ընդունում, գնահատում և ընտրություն
- հաստատված դրամաշնորհային դիմումների հիման վրա դրամաշնորհների տրամադրման որոշման կայացում
- դրամաշնորհների վերաբերյալ համաձայնագրերի կնքում և շահառուների վճարում
- շահառուների կողմից ներկայացված պայմանագրային հաշվետվությունների ընդունում և քննում
- ծրագրի շահառուների վերահսկում և աջակցություն
- փաստաթղթային ստուգումներ և օժանդակվող գործողությունների ստուգում և աուդիտ տեղում
- օժանդակվող միջոցառումների արդյուքների հրապարակում և կիրառում
- ծրագրի իրականացման և տվյալ երկրում նրա ազդեցության վերլուծություն և եզրահանգումներ:

«Գործադիր գործակալությունը» Բրյուսելում. Կրթության, տեսալսողական և մշակութային հարցերով զբաղվող **Գործադիր գործակալության** առաքելությունն է՝ իրականացնել Եվրոպական Հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող մի շարք ծրագրեր ու միջոցառումներ, որոնք նվիրված են կրթության և ուսուցման, ակտիվ քաղաքացիության, երիտասարդության, տեսալսողական ու մշակութային հարցերին:

Գործադիր գործակալության կողմից կառավարվող ծրագրային տարրերը բոլորը «կենտրոնացված» են, այսինքն՝ դիմումներն անմիջականորեն ներկայացվում են Բրյուսել և ոչ թե Ազգային գործակալության միջոցով:

Ելնելով Հանձնաժողովի կողմից ստեղծված շրջանակից, Գործադիր գործակալությունը պարտավորվում է իրականացնել հետևյալ առաջադրանքները.

- առաջարկների և հայտերի համար հրավերքների հրապարակում
- դրամաշնորհների համար դիմումների ընդունում, ծրագրերի գնահատում և ընտրություն (դրամաշնորհների տրամադրման որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կողմից, իսկ եթե ծրագիրը պահանջում է՝ Եվրոպական Խորհրդարանի կողմից)
- ծրագրային դրամաշնորհների վերաբերյալ համաձայնագրերի կնքում և շահառուների վճարում
- շահառուների կողմից ներկայացված պայմանագրային հաշվետվությունների ընդունում և քննում
- ծրագրի շահառուների վերահսկում և աջակցություն
- փաստաթղթային ստուգումներ, օժանդակվող միջոցառումների ստուգում և աուդիտ տեղում:

Cedefop (Մասնագիտական կրթության զարգացման եվրոպական կենտրոն) Թեսելոնիկիում, Հունաստան. Եվրոպական Հանձնաժողովի անունից համակարգում է ուսումնական այցերի ծրագիրը ԵՄ մակարդակում: Ուսումնական այցերի ծրագիրը հանդիսանում է«Տրանսվերսալ» ծրագրի մի մասը և **«ապակենտրոնացված»** գործողություններից մեկը, այսինքն՝ դիմումները ներկայացվում են Ազգային գործակալություններ:

Եվրոպական Հանձնաժողով (Կրթության և մշակույթի գլխավոր տնօրենություն)

Գործադիր գործակալություն

EACEA
Education, Audiovisual & Culture Executive Agency

Ազգային գործակալություններ[3]

ԱՎՍՏՐԻԱ	ԲԵԼԳԻԱ	- BELGIQUE	- BELGIEN
ԲՈՒԼՂԱՐԻԱ	ԿԻՊՐՈՍ		
ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ԴԱՆԻԱ		
ԷՍՏՈՆԻԱ	ՖԻՆԼԱՆԴԻԱ		
ՖՐԱՆՍԻԱ	ԳԵՐՄԱՆԻԱ		
ՀՈՒՆԱՍՏԱՆ	ՀՈՒՆԳԱՐԻԱ		
ԻՍԼԱՆԴԻԱ	ԻՌԼԱՆԴԻԱ		
ԻՏԱԼԻԱ	ԼԱՏՎԻԱ		
ԼԻԽՏԵՆՇՏԱՅՆ	ԼԻՏՎԱ		
ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ	ՄԱԼԹԱ		
ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ	ՆՈՐՎԵԳԻԱ		
ԼԵՀԱՍՏԱՆ	ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ		
ՌՈՒՄԻՆԻԱ	ՍԼՈՎԱԿԻԱ		
ՍԼՈՎԵՆԻԱ	ԻՍՊԱՆԻԱ		
ՇՎԵԴԻԱ	ԹՈՒՐՔԻԱ		
ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ			

[3] ԱԳ-ների հասցեներն ու կայք էջերը կարելի է գտնել ներքոհիշյալ կայք էջում.

1.Զ. ՈՐՈՇ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Նախքան հետագա գլուխները կարդալը հարկ է ծանոթանալ ամբողջ փաստաթղթում օգտագործվող հետևյալ սահմանումներին.

Գործողություն	ՑԿՕ-ում առանձին ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ընդհանուր բնույթի միջոցառում (տես մաս Ի.Բ վերևում և ՑԿՕ ստեղծող որոշման հոդված 5):
Միավորում	Կազմակերպությունների կամ անհատների խումբ, որն իրականացնում է եվրոպական համագործակցության համատեղ ծրագիր, գործընկերություն կամ ցանց:
Համակարգող կազմակերպություն	Ցանկացած գործընկերության, ծրագրի կամ ցանցի ներսում գտնվող կազմակերպություն, որը պատասխանատու է ծրագրի ընդհանուր ղեկավարման և ամենօրյա կառավարման համար: Համակարգող կազմակերպության պարտավորությունները տարբեր են՝ կախված գործողությունից: Կենտրոնացված ծրագրերում կամ ցանցերում Համակարգող կազմակերպությունը հաճախ նույնն է, ինչ դիմող կազմակերպությունը:
Դիմող կազմակերպություն	Գործընկեր կազմակերպությունը(ները), որը իրավաբանորեն պատասխանատու է դիմումի համար: Երբ դիմումը հաստատվում է, Դիմող կազմակերպությունը դառնում է Շահառու կազմակերպություն:
Շահառու	Ֆինանսական լեզվով՝ այն կազմակերպությունը, հաստատությունը կամ անհատը, որի հետ կնքվում է դրամաշնորհի ստանալու վերաբերյալ «պայմանագիր» (պաշտոնական լեզվով՝ «Դրամաշնորհային պայմանագիր»): Ապակենտրոնացված գործընկերության գործողություններում բոլոր մասնակիցները դառնում են շահառուներ:
Կենտրոնացված միջոցառում	ՑԿՕ-ի շրջանակներում իրականացվող միջոցառում, որը ղեկավարվում է Գործադիր գործակալության կողմից:
Ապակենտրոնացված միջոցառում	ՑԿՕ-ի շրջանակներում իրականացվող միջոցառում, որը ղեկավարվում է տվյալ երկրի ազգային պատասխանատուի կողմից նշանակված Ազգային գործակալության կողմից:
Իրավաբանական ներկայացուցիչ	Դիմող կազմակերպությունը ներկայացնելու իրավաբանորեն լիազորությամբ անձ, որին վերապահված է կազմակերպությունը ներկայացնել իրավական համաձայնագրերում: Դիմումը հաստատվելու դեպքում, այդ անձը պետք է ստորագրի դրամաշնորհային պայմանագիրը:

2.Ա. ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՓՈՒԼ

Դրամաշնորհների համար դիմումների ներկայացում

Դրամաշնորհների համար դիմումների ներկայացնելը համապատասխան մարմնին /Ազգային գործակալություններ կամ գործադիր գործակալություն/՝ ընտրված գործողության համաձայն

Առաջարկների գնահատում

Դրամաշնորհների համար դիմումների գնահատումն իրականացվում է փորձագետների կողմից՝ առաջարկների համար յուրաքանչյուր հրավերքում սահմանված չափանիշների համաձայն, որոնք հաշվի են առնում ֆորմալ ու որակային հարցերը

Ընտրության արդյունքները

Ստեղծվում են դրամաշնորհների հաջող դիմումների ցանկեր: Դրամաշնորհների համար բոլոր դիմողներին տեղեկացվում է իրենց դիմումների արդյունքների մասին:

Մերժված դիմողներին նույնպես կտեղեկացվի մերժման պատճառների մասին

Պայմանագրային փուլ

Գնահատման գործընթացում հաջողության հասած դիմողները Գործադիր գործակալության կամ համապատասխան Ազգային գործակալության կողմից կստանան դրամաշնորհային համաձայնագիր /պայմանագիր/՝ գործողությունից կախված: Դրմաշնորհային պայմանագրում նշվում է տրամադրված դրամաշնորհը և սահմանվում կիրառության ենթակա ֆինանսական կանոնները: Վճարումները սովորաբար կատարվում են փուլերով

Ծրագրային գործողությունների վավերության ժամանակահատված

Ժամանակահատված, որի ընթացքում կարող են ծախսեր կատարվել ու փոխհատուցվել ԵՄ դրամաշնորհի միջոցով /վավերության ժամանակահատվածի տևողությունը կախված է ծրագրի տևողությունից/, ինչպես նաև իրականացվել պլանավորված գործողությունները

Ծրագրերի շարունակական մոնիթորինգ

Ազգային գործակալություններն ու Եվրոպական Հանձնաժողովը/ Գործադիր գործակալությունը մոնիթորինգի են ենթարկում ծրագրի իրականացումն ողջ կենսափուլի ընթացքում: Որոշ դեպքերում տեղում այցելություններ ու թեմատիկ մոնիթորինգային նախաձեռնություններ են իրականացվում

Հաշվետվություններ

(Գործողությունների միայն որոշ տեսակներ, 1 տարուց ավել տևողությամբ ծրագրեր)

Ընթացիկ հաշվետվությունների ներկայացում

Ծրագրի կենսափուլի կեսին դիմողները պարտավոր են ներկայացնել Ընթացիկ հաշվետվություն, որն ապահովում է ծրագրի իրականացման ու մինչ այդ կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն: Հաշվետվությունը գնահատվում է, և միայն վերջինիս հաստատումից հետո կարող է վճարումների երկրորդ կեսը կատարվել /անհրաժեշտության դեպքում/

Վերջնական հաշվետվության ներկայացում

Պայմանագրային ժամանակահատվածի ավարտից հետո դիմողները պարտավոր են ներկայացնել Վերջնական հաշվետվություն, որն ապահովում է տեղեկատվություն ծրագրի իրականացման, ձեռք բերված արդյունքների ու կատարված ծախսերի վերաբերյալ: Միայն հաշվետվության հաստատումից հետո են վերջնական վճարումները կատարվում:

Ստուգումներ և տեղում աուդիտ
Օժանդակված ծրագրերի նմուշը կենթարկվի մանրամասն ստուգումների՝ հավաստիանալու եվրոպական ֆոնդերի նպատակային օգտագործման մասին:

2.Բ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՐՋԱՓՈՒԼ

Ներքևում ներկայացվող ֆինանսական շրջափուլը վերաբերում է Ցկյանս կրթության ծրագրի ներքո իրականացվող բոլոր միջոցառումներին, թեև որոշ պահանջները վերաբերում են միջոցառումների միայն առանձին տեսակներին.

(1) Ներքևում ներկայացվող ֆինանսական շրջափուլը վերաբերում է Ցկյանս կրթության ծրագրի ներքո իրականացվող բոլոր միջոցառումներին, թեև որոշ պահանջները վերաբերում են միջոցառումների միայն առանձին տեսակներին.

(2) *բյուջեի գնահատումը.* իրականացվում է գոյություն ունեցող թափանցիկ չափանիշների հիման վրա, որին կարող է հետևել բյուջեի վերանայումը (ուղղում/ խմբագրում), որի նպատակն է՝ համոզվել վավերության մեջ, ինչպես նաև, որ այն ներառում է միայն այնպիսի բաղադրիչներ, որոնք «անհրաժեշտ են առաջարկված միջոցառման իրականցման համար»: Բյուջեի վերանայման ժամանակ կիրառելի կանոնները բացատրվում են ֆինանսական դրույթների վերաբերյալ գլխում.

(3) *դրամաշնորհային համաձայնագրի վավերացումը («պայմանագիր»)*

(4) *վճարման ընթացակարգեր.* դրանք, ժամանագրական հաջորդականությամբ, վերաբերում են այնպիսի հարցերի, ինչպիսիք են ֆինանսական երաշխավորության ապահովումը (եթե դա անհրաժեշտ է պետական մարմին չհանդիսացող որոշակի շահառու կազմակերպությունների համար), ֆինանսավորմանը նախորդող քայլերը, մնացորդի վճարումը, վերականգնման ընթացակարգերը և այլն.

(5) *պայմանագրային փոփոխություններ.* դրանք հնարավոր են ծրագրի իրականացման ժամանակ: Համապատասխան հրահանգները ներառված են կամ ներկայացվում են Դրամաշնորհային համաձայնագրին կից.

(6) *հաշվետվություն ներկայացնելու պահանջները.* դրանք վերաբերում են Միջանկյալ (եթե կիրառելի են) և Վերջնական հաշվետվություններին: Հրահանգները ներկայացվում են Դրամաշնորհային համաձայնագրին կից.

(7) *ֆինանսական ստուգումների և աուդիտի վերաբերյալ պահանջները.* վերջնական վճարումից կամ շահառուի կողմից փոխհատուցումից 5 տարի անց, ցանկացած ժամանակ կարող են իրականացվել ֆինանսական ստուգումներ և աուդիտ տեղում: Ուստի համապատասխան փաստաթղթերը պետք է այս ժամանակահատվածում գտնվեն Շահառուի մոտ:

2.Գ. ԿԻՐԱՌԵԼԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Սույն ուղեցույցում սահմանված կանոնները վերաբերում են բոլոր միջոցառումներին, որոնք Ցկյանս կրթության ծրագրի շրջանակներում կարող են ֆինանսավորվել Համայնքային ֆոնդերի կողմից.

ՑԿԾ-ի շրջանակներում օժանդակվող գործողությունների կառավարման և ֆինանսավորման կարգը սահմանված է հետևյալ փաստաթղթերում.

- Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի 2006թ. նոյեմբերի 15-ի որոշում No 1720/2006/ԵՀ (Ցկյանս կրթության ծրագրի ստեղծումը),
- Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի համար կիրառելի ֆինանսական կանոնների վերաբերյալ Խորհրդի 2002թ. հունիսի 25-ի հրաման (ԵՀ, Euratom) No 1605/2002, որը բոլորովին վերջերս փոփոխությունների է ենթարկվել Խորհրդի 2006թ. դեկտեմբերի 13-ի հրամանով (ԵՀ, Euratom) N՝ 1995/2006,
- Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի համար կիրառելի ֆինանսական կանոնների վերաբերյալ 2002թ. դեկտեմբերի 23-ի Հանձնաժողովի հրաման (ԵՀ, Euratom) No 2342/2002, որը մանրամասն կանոններ սահմանեց Խորհրդի հրամանի իրականացման վերաբերյալ (ԵՀ, Euratom) No 1605/2002, որն էլ բոլորովին վերջերս փոփոխությունների է ենթարկվել Հանձնաժողովի 2007թ. ապրիլի 23-ի հրամանով No 478/2007:

ՑԿԾ-ի ստեղծման վերաբերյալ որոշումը նախորդել է մյուս կիրառելի կանոններին.

Անհրաժեշտ է սույն ուղեցույցն ընթերցել առաջարկների համար հրավերքի և դրամաշնորհային դիմումաձևերի հետ մեկտեղ: Տեքստերի մեջ ցանկացած անհամապատասխանության դեպքում, առաջարկների համար հրավերքի համատեքստում փաստաթղթերի հաջորդականությունը հետևյալն է՝

(1) Ցկյանս կրթության ծրագրի ստեղծման վերաբերյալ որոշում No 1720/2006/ԵՀ.
(2) Եվրոպական Միության պաշտոնական ամսագրում առաջարկների համար հրավերքի պաշտոնական հրապարակում.
(3) ՑԿԾ-ի վերաբերյալ Հանձնաժողովի կայք էջում հրապարակված հրավերքի տեքստը.
(4) ՑԿԾ-ի սույն ուղեցույցը.
(5) Դիմումաձևերը

Հանձնման վերջնաժամկետը. Ծրագրի յուրաքանչյուր գործողություն ունի իր վերջնաժամկետը: Խնդրում ենք Առաջարկների համար 2009թ. հրավերքում ճշտել Ձեզ հետաքրքրող գործողության վերջնաժամկետը:

Որոշ դեպքերում, հատկապես կենտրոնացված գործողությունների ժամանակ, դրամաշնորների տրամադրման ընթացակարգը կարող է կազմակերպվել երկու փուլով: Այդ դեպքում, դիմողներին կխնդրեն տեղեկատվության մի մասը ներկայացնել առաջին փուլի վերջնաժամկետում (օրինակ՝ միավորման, ծրագրի բովանդակության և բյուջեի վերաբերյալ տեղեկատվություն), որին երկրորդ փուլում կհաջորդի միայն կարճ ցուցակում հայտնված դիմողներին ուղղված խնդրանքը. այն է՝ ներկայացնել մնացած բոլոր փաստաթղթերը (նամակ-պարտավորագիրը, հաշվապահական ու ֆինանսական փաստաթղթերը և այլն):

Ծրագրի կենսափուլը. Ուղեցույցում յուրաքանչյուր ծրագրին ու գործողությանը նվիրված գլուխներում ներկայացված է տեղեկատվություն յուրաքանչյուր գործողության վերաբերյալ՝ սկսած դրամաշնորհային դիմումի հանձնումից մինչև մեկնարկային ամսաթիվն ու օժանդակվող գործողության առավելագույն տևողությունը: Խնդրում ենք հաշվի առնել, որ այդ տեղեկությունները 2009թ. Առաջարկների համար հրավերքի հրապարակման պահին **նախնական** են. ցանկացած փոփոխության մասին կտեղեկացվի համապատասխան Գործակալության կայք էջի միջոցով: Այնուամենայնիվ, վերջին փոփոխությունը կարվի դրամաշնորհների համար դիմումների հանձնման վերջին օրվանից ամենաուշը 10 աշխատանքային օր առաջ, ինչպես սահմանված է ՑԿԾ-ի սույն ուղեցույցում:
Տևողությունը. սույն ուղեցույցում մատնանշված ժամկետից ավելի երկար տևողությամբ գործողությունների վերաբերյալ դիմումները կմերժվեն:

Ծրագրի ավարտը. Եթե Դրամաշնորհային համաձայնագրի ստորագրումից և ծրագրի/ գործողության մեկնարկից հետո, շահառուի կամքից անկախ, լիովին արդարացված պատճառներով պարզվում է, որ շահառուն չի կարող ծրագիրը նախատեսված ժամկետում ավարտել, ծրագրի իրականացման ժամկետը կարող է երկարաձգվել: Սակայն երկարաձգման վերաբերյալ որոշումը կայացվում է ոչ թե մեխանիկորեն, այլ մանրամասն վերլուծության արդյունքում: Դեռ ավելին, ծրագրի ժամկետի երկարաձգումը չի ենթադրում դրամաշնորհի չափի կամ համաֆինանսավորման տոկոսադրույքի մեծացում:

Վավերության ժամանակահատված. Ծախսերի ու գործողությունների վավերության ժամանակահատվածի սկիզբը և ավարտը նշված են Դրամաշնորհային համաձայնագրում: Ոչ մի դեպքում ծախսերի ու գործողությունների վավերության ժամանակահատվածը չի կարող մեկնարկել մինչև դրամաշնորհային դիմումի հանձնման օրը:

3.ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՀԱՆՁՆՄԱՆ ՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

3.Ա. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դրամաշնորհային դիմումի ներկայացումը

Ցկյանս կրթության ծրագրի ապակենտրոնացված գործողությունների շրջանակում ֆինանսական օժանդակության համար դրամաշնորհային դիմումները ներկայացվում են դիմողի երկրում գտնվող Ազգային գործակալությանը: Ցկյանս կրթության ծրագրի կենտրոնացված գործողությունների շրջանակում ֆինանսական օժանդակության համար դրամաշնորհային դիմումները պետք է ներկայացնել Գործադիր գործակալություն: Ներքոհիշյալ աղյուսակում ներկայացված են դիմումի և դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերը.

Ազգային գործակալության ընթացակարգ 1 (ԱԳ1)
Հետևյալ գործողությունները, որոնց հիման վրա համապատասխան Ազգային գործակալությունները կայացնում են դրամաշնորհների տրամադրման որոշումներ, կառավարվում են «Ազգային գործակալության ընթացակարգ 1-ի» միջոցով. • անհատների **շարժունություն**, • **երկկողմ և բազմակողմ գործընկերություններ,** • **«Տրանսվերսալ» ծրագրի ներքո միակողմ և ազգային ծրագրեր**[4] **Սույն գործողությունների շրջանակներում** դրամաշնորհային դիմումները ներկայացվում են Ազգային գործակալություն, որը նշանակվում է դիմողի երկրի ազգային պատասխանատուի կողմից: Ազգային գործակալությունը կայացնում է ընտրությունը և ֆինանսական օժանդակություն հատկացնում ընտրված դիմողներին: Ազգային գործակալությունները դրամաշնորհներ են տրամադրում համապատասխան երկրներում գտնվող շահառուներին: Այս ընթացակարգին են հետևում նաև Էրազմուս և Լեոնարդո դա Վինչի վկայականների համար դիմելիս:
Ազգային գործակալության ընթացակարգ (ԱԳ2)
Հաջորդ գործողությունը, որի շրջանակներում Հանձնաժողովը կայացնում է դրամաշնորհներ տրամադրելու որոշումներ, իսկ գնահատման ու պայմանագրերի կնքման ընթացակարգերը ստանձնում են համապատասխան Ազգային գործակալությունները, կառավարվում են «Ազգային գործակալության ընթացակարգ 2-ի միջոցով». • **բազմակողմ ծրագրեր. Նորարարության փոխանցում (Լեոնարդո դա Վինչի)** Այս գործողության ներքո դրամաշնորհային դիմումները ներկայացվում են այն երկրի Ազգային գործակալությանը, որտեղ գտնվում է ծրագրի համակարգողը: Այս Ազգային գործակալությունն իրականացնում է դիմումների գնահատումը և Հանձնաժողովին ներկայացնում դիմումների վերջնական ցուցակը՝ հաստատման համար: Ծրագրերի կրկնակի ֆինանսավորումից խուսափելու համար տարբեր Ազգային գործակալությունների կողմից առաջարկված վերջնական ցուցակները խաչաձև ստուգման են ենթարկվում՝ նախքան Հանձնաժողովի կողմից դրամաշնորհման վերաբերյալ որոշում կայացնելը: Դրամաշնորհների տրամադրման վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը կայացնելու հետո Ազգային գործակալությունները դրամաշնորհներ են տրամադրում ընտրված ծրագրերի համակարգողներին, որոնք գտնվում են համապատասխան իրավասու/ մասնակից երկրներում և այնուհետև պատասխանատու են ծրագրերում մասնակցող բոլոր գործընկերներին գումարներ բաժանելու համար:

[4] Որոշման հոդված 33

Մասնակցության իրավունք ունեցող երկրներ, որոնք այնուհետև պատասխանատու են ծրագրերում մասնակցող գործընկերների միջև ֆոնդերի բաշխման համար:

Հանձնաժողովի ընթացակարգը (COM)
Հետևյալ գործողությունները, որոնց ներքո դրամաշնորհային դիմումները ներկայացվում են Գործադիր գործակալություն և դրամաշնորհներ տրամադրելու վերաբերյալ որոշումները կայացվում են Հանձնաժողովի կողմից, կառավարվում են «Հանձնաժողովի ընթացակարգի» միջոցով. • **միակողմ և ազգային ծրագրեր՝** «Ժան Մոնե» ծրագրի ներքո. • **բազմակողմ ծրագրեր և ցանցեր.** • **լրացուցիչ միջոցառումներ.** • **դիտումներ և վերլուծություն.** • **դրամաշնորհների տրամադրում** Այս ընթացակարգը կկիրառվի նաև «Էրազմուս Համալսարանի կանոնադրության համար դիմումների դեպքում:

Դիմողներին սովորաբար տեղեկացվում է դիմումների ստացման մասին՝ ներկայացման վերջնաժամկետից 30 օրվա ընթացքում:

Հրահանգներ պատշաճ ներկայացման համար

1. Բոլոր գործողությունների իրականացման համար դիմումները պետք է ներկայացվեն համապատասխան Գործակալության կողմից հրապարակված հրահանգների համաձայն (Ազգային գործակալություն կամ Գործադիր գործակալություն):
2. Թղթային տարբերակով ներկայացված դիմումների վերջնաժամկետի համապատասխանությունը կստուգվի փոստային նամականիշի ամսաթվով, ուստի դիմողներին խորհուրդ է տրվում վերցնել փոստով ուղարկման ամսաթիվը և լրիվ հասցեն պարունակող կտրոն:
3. Ներկայացման վերջնաժամկետից հետո դիմողները փոփոխություններ չեն կարող կատարել:
4. Կազմակերպությունների դիմումները կարող են ներկայացվել միայն իրավաբանական մարմինների միջոցով: Դրանցում պետք է լինի տվյալ իրավաբանական մարմինը ներկայացնելու համար իրավաբանորեն լիազորված անձի ստորագրությունը (լիազորված ստորագրություն):

Դիմումածևեր

Այս փաստաթղթերը կարելի է ձեռք բերել՝ գործողությունից կախված.

- ԱԳ-ի կայք էջում. Ազգային գործակալությունները յուրաքանչյուր երկրի համար
- Գործադիր գործակալության կայք էջում՝http://eacea.ec.europa.eu/llp/index_en.htm:

	ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
	Ազգային գործակալության ընթացակարգ 1 – ԱԳ1	*Ազգային գործակալության ընթացակարգ 2* – ԱԳ2	*Հանձնաժողովի ընթացակարգ* - COM
Կիրառելի է (գործողության տեսակը)	❖ Անդրազգային շարժունություն ❖ Երկկողմ և բազմակողմ գործընկերություններ ❖ Միակողմ և ազգային ծրագրեր (Տրանսվերսալ ծրագիր)	❖ Բազմակողմ ծրագրեր. Նորարարությունների փոխանցում (Լեոնարդո դա Վինչի)	❖ Բազմակողմ ծրագրեր և ցանցեր ❖ Դիտումներ և վերլուծություն ❖ Դրամաշնորհների տրամադրում ❖ Միակողմ ծրագրեր - Ժան Մոնե ❖ Լրացուցիչ միջոցառումներ
Ում պետք է դիմումը ուղարկվի	Յուրաքանչյուր դիմող հաստատության կամ անհատի համապատասխան Ազգային գործակալություն	Դրամաշնորհային դիմումը համակարգողի Ազգային գործակալություն	Կրթության, տեսալսողական և մշակութային Գործադիր գործակալություն
Ընթացակարգի հիմնական քայլերը	ա. Առաջարկների գնահատում պաշտոնական (վավերության և բացառման չափանիշներ) և որակի չափանիշների համաձայն (ընտրության և շնորհման չափանիշներ, որոնք սահմանվում են սույն Ուղեցույցում) բ. Ազգային գործակալության կողմից ընտրական ցուցակի հաստատումը գ. Ազգային գործակալությունների կողմից ընտրված շահառուներին դրամաշնորհների հատկացումը	ա. Առաջարկների գնահատում պաշտոնական (վավերության և բացառման չափանիշներ) և որակի չափանիշների համաձայն (ընտրության և շնորհման չափանիշներ) Դիմումների վերջնական ցուցակի պատրաստումը, որն այն առաջարկում է ընդունել: բ. Հանձնաժողովի կողմից ընտրական ցուցակի հաստատումը գ. Ազգային գործակալությունների կողմից ընտրված առաջարկների համար դրամաշնորհների հատկացում	ա. Առաջարկների գնահատում պաշտոնական (վավերության և բացառման չափանիշներ) և որակի չափանիշների համաձայն (ընտրության և շնորհման չափանիշներ) բ. Ընտրական ցուցակի հաստատում գ. Ընտրված ծրագրերին դրամաշնորհների հատկացում

3.Բ. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Դրամաշնորհման գործընթացը ներառում է բազմաթիվ դերակատարներ՝ Հանձնաժողովը, Գործադիր գործակալությունը, Ազգային գործակալությունները, անդամ պետություններն ու մասնակից երկրները, ինչպես նաև համապատասխան Ծրագրային հանձնաժողովի միջոցով ազգային պատասխանատուներն անդամ պետություններում և այլ մասնակից երկրներում: Որոշ դեպքերում Եվրոպական Խորհրդարանն ունի դրամաշնորհների վերաբերյալ որոշումները «մանրակրկիտ ուսումնասիրելու իրավունք»[5] :

[5] Եվրոպական Խորհրդարանի մանրակրկիտ ուսումնասիրության իրավունքի համար տես 1999/468/ԵՀ որոշման հոդված 8:

\

Գնահատող հանձնաժողովը Ապահովում է արդար ընթացակարգերի կիրառում, ինչպես նաև հավասար ու անաչառ վերաբերմունք դիմողների նկատմամբ



Գծագրում պատկերված են դիմումների գնահատման հիմնական ընթացակարգերը:

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Ծրագրային բոլոր գործողությունների համար, բացի անհատական շարժունության գործողություններից, դրամաշնորհային յուրաքանչյուր դիմում սովորաբար գնահատվում է առնվազը երկու փորձագետի կողմից: Հիմնականում դրանք արտաքին փորձագետներն են (այսինքն փորձագետներ, որոնք չեն հանդիսանում դրամաշնորհների տրամադրման ընթացակարգը կազմակերպող Գործակալության ներկայացուցիչներ): Նրանք գնահատումն իրականացնում են նախօրոք մշակված բալային համակարգի և որակական բնութագրեր ներառող ստանդարտացված ստուգացանկերի հիման վրա: Դրամաշնորհային դիմումի վերջնական գնահատականը դրվում է առանձին գնահատումներում ընդգրկված փորձագետների ընդհանուր համաձայնությամբ:

Փորձագետների գնահատման հիման վրա կազմակերպող Գործակալությունը **դասակարգում** է առաջարկված դրամաշնորհային դիմումները ըստ դրանց հաստատման, մերժման և պահուստային ցանկերի: Դասակարգման մեջ հաշվի են առնվում դրամաշնորհային այն գումարները, որոնք նախատեսված են հաստատման կամ պահուստային ցուցակների համար առաջարկված դիմումներում: Դիմումների պահուստային ցուցակը կարող է օգտագործվել հետագայում դրամաշնորհների տրամադրման համար, եթե հաստատված ծրագրերի դադարեցման կամ ծրագրային բյուջեն մեծացնելու (օրինակ՝ Եվրոպական խորհրդարանի կողմից տրամադրվող լրացուցիչ միջոցներ) հետևանքով առաջանում են որոշակի ֆինանսական միջոցներ:

Բազմակողմ Գործընկերությունների դեպքում (Կոմենիուս, Լեոնարդո դա Վինչի և Դրունդվիգ), դիմումի գնահատումն իրականացվում է համակարգող երկրի ԱԳ-ի կողմից՝ մասնակից երկրներում կիրառվող որակի համընդհանուր չափանիշների հիման վրա: Ազգային գերակայությունները (եթե այդպիսիք կան) նույնպես հաշվի են առնվում:

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Դրամաշնորհային դիմումների վերոհիշյալ դասակարգումը, որը գնահատման ընթացակարգի արդյունքն է, ներակայացվում են այսպես կոչված «Գնահատման հանձնաժողովին»: Գնահատող հանձնաժողովի կազմը կախված է ծրագրերից ու գործողություններից: Նրա կազմում կարող են լինել Հանձնաժողովի/ Գործակալության անդամներ, ինչպես նաև արտաքին փորձագետներ ու շահառուների ներկայացուցիչներ: Գնահատող հանձնաժողովի դերն է՝ ղեկավարել գնահատման ամբողջ ընթացակարգը, արդար և թափանցիկ ընթացակարգերի կիրառման միջոցով բոլոր դիմումների նկատմամբ ապահովել հավասար վերաբերմունք, ինչպես նաև դրամաշնորհային առաջարկ ներկայացնել դրամաշնորհների տրամադրման վերաբերյալ որոշումների կայացման համար պատասխանատու անձին՝ հետևյալի հիման վրա.

i. վավերության, ընտրության, մերժման և շնորհման հրատարակված չափանիշների թափանցիկ և անկողմնապահ կիրառում

ii. տրամաբանական գնահատում

iii. ճշգրիտ ֆինանսական վերլուծություն (ըստ անհրաժեշտության)

iv. արտաքին դերակատարների (ինչպիսիք են Ազգային գործակալությունները կան Եվրոպական Հանձնաժողովի պատվիրակությունները ծրագրին մասնակցող «երրորդ» երկրներում) (ըստ անհրաժեշտության)

համաձայն՝
v. ծրագրի/ Գործողության հիմնախնդիրների և գերակայությունների,
vi. առկա բյուջեի:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ

Որոշման կայացման պաշտոնական գործընթացը կարող է տարբերվել՝ կախված այն հանգամանքից, թե ծրագրի/ Գործողության ներքո դրամաշնորհների տրամադրման վերաբերյալ որոշումը Եվրոպական խորհրդարանի մանրազնին քննարկման ենթակա է, թե՝ ոչ: Եթե՝ ոչ, որոշումն անմիջականորեն կկայացվի համապատասխան Ազգային գործակալության (ապակենտրոնացված գործողություններ) կամ Հանձնաժողովի կամ Գործադիր գործակալության (կենտրոնացված գործողություններ) կողմից՝ Գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված դրամաշնորհների տրամադրման վերաբերյալ առաջարկի հիման վրա: Ծրագրային այդ գործողությունների դեպքում, որոնց վերաբերյալ անհրաժեշտ է խորհրդակցել Ծրագրային հանձնաժողովի հետ, Եվրոպական խորհրդարանի մանրազնին քննարկումը կազմում է գործընթացի մի մասը (տես վերևում):

Գնահատման չափանիշներ

Դիմումները գնահատվում են ըստ չորս տեսակի չափանիշների.

- Ընտրելիության չափանիշներ
- Բացառման չափանիշներ
- Ընտրության չափանիշներ
- Որակավորման չափանիշներ:

ա. Ընտրելիության չափանիշներ

Միայն ներքոհիշյալ ընտրելիության պաշտոնական չափանիշներին համապատասխան դիմումները կդիտարկվեն դրամաշնորհների համար:

ԸՆՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Դիմումները պետք է բավարարեն հետևյալ չափանիշները.

1 Համապատասխանել առաջարկների համար հրավերքում և սույն Ուղեցույցի հատված 3-ի «Պատշաճ ներկայացման վերաբերյալ հրահանգները» մասում սահմանված դիմումների ներկայացման ընթացակարգերին.
2 Հաշվի առնել առաջարկների համար համապատասխան հրավերքում սահմանված վերջնաժամկետները: Սույն ուղեցույցի Մաս II-ում նշված են յուրաքանչյուր գործողության համար առաջարկվող ժամկետները, սակայն անհրաժեշտ է ստուգել Առաջարկների հրատարկված վերջնական հրավերքը.
3 Համապատասխանել ծրագրերի նվազագույն և առավելագույն տևողության վերաբերյալ կանոններին, ինչպես նաև հաշվի առնել ներգրավված գործընկերների ու երկրների նվազագույն և առավելագույն քանակը, ինչպես նշված է սույն Ուղեցույցի Մաս II-ում:
4 Եթե դիմումը ներկայացվում է միավորման կողմից, ներգրավել ԵՄ անդամ որևէ երկրում ստեղծված առնվազը մեկ կազմակերպություն: Բազմակողմ ծրագրերի դեպքում, կհամարվի, որ մի շարք ՑԿԾ-ում մասնակցող երկրներում ստեղծված անդամներ ունեցող Եվրոպական միավորումները, որոնք ակտիվորեն մասնակցում են ծրագրում, բավարարում են երկրների նվազագույն քանակի վերաբերյալ պահանջը, և կարիք չի լինի միավորման մեջ ներգրավել այլ մարմիններ, չնայած դա խորհուրդ է տրվում անել ըստ անհրաժեշտության: Միակողմ ծրագրերի ու «Ժան Մոնե» բազմակողմ ծրագրերի համար պարտադիր չէ բավարարել ԵՄ անդամ որևէ երկրում ստեղծված առնվազը մեկ կազմակերպություն ներգրավելու պայմանը:
5 Պետք է գրված լինեն Եվրոպական Միության[6] [7] [8] [9] որևէ պետական լեզվով: Միավորման կողմից ներկայացվող դիմումները պետք է ներկայացվեն միավորման աշխատանքային լեզվով:
6 Պետք է բացառապես ներկայացվեն տվյալ գործողության համար պատշաճ **պաշտոնական դիմումաձևով,** որը պետք է լիովին լրացված լինի էլեկտրոնային տարբերակով[10] (ոչ ձեռագիր):
7 Ներառել եվրոյով արտահայտված դրամաշնորհային հայտը:

6 Բացի EFTA/EEA –ում և թեկնածու երկրներում Ազգային գործակալություններին ներկայացվող շարժունության դրամաշնորհային դիմումներից: Այդ դրամաշնորհների համար դիմումները կարող են նախագծվել դիմողի ազգային լեզվով: 7 Էրազմուս համալսարանի կանոնադրության համար դիմողները պետք է էրազմուս ռազմավարությունը ներկայացնեն նաև անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով: 8 «Ժան Մոնե» ծրագրի դիմողները պետք է իրենց դիմումները ներկայացնեն անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով: 9 «Տրանսվերսալ» ծրագրում ուսումնական այցերի համար դիմողները պետք է դիմումը ներկայացնեն ուսումնական այցի լեզվով: 10 Որոշ գործողությունների համար դիմողներին կարող է խնդրեն լրացնել համացանցային դիմումաձև:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐ

Դիմողները պետք է լինեն ՑԿՕ-ում մասնակցող որևէ երկրից[11]

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Անհատների համար նախատեսված շարժունության դրամաշնորհներ կարող են ստանալ՝

- Ցկյանս կրթության ծրագրում մասնակցող երկրի քաղաքացին կամ
- այլ երկրների քաղաքացիներ, եթե նրանք, ազգային օրենսդրության համաձայն, կամ ծրագրում մասնակցող երկրի մշտական բնակիչներ են, կամ ունեն փախստականի կարգավիճակ:

Անդրազգային անհատական շարժունության գործողության դեպքում, կամ դիմողի երկիրը կամ երկիրը, ուր նա ձգտում է հասնել պետք է լինեն ԵՄ անդամ երկիր, բացառությամբ այն դեպքերի, երբ դրամաշնորհը տրամադրվում է, որպեսզի դրամաշնորհ ստացողը հնարավորություն ունենա մասնակցել մի շարք երկրներից եկած մասնակիցներ ունեցող ուսումնական միջոցառմանը: Ուստի այդ բացառությունը վերաբերում է շարժունությանը, որն իրականացվում է բազմակողմ գործընկերությունների ու ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև այնպիսի գործողություններին, ինչպիսիք են՝ «Կոմենիուսի» և «Գրունդվիգի» ներքո իրականացվող որակավորումը բարձրացնող վերապատրաստումները, «Էրազմուս», «Գրունդվիգ» գործնական հանդիպումների շրջանակում իրականացվող արագացված ծրագրերն ու «Տրանսվերսալ» ծրագրի ներքո կազմակերպվող ուսումնական այցերը: Խնդրում ենք ծանոթանալ սույն Ուղեցույցի Մաս II-ում ներկայացված առանձնահատուկ գործողությունների նկարագրերի հետ՝ պարզելու, արդյոք այս կանոնը կիրառելի է Ձեզ հետաքրքրող գործողության նկատմամբ:

Բացառիկ դեպքերում կարող է օժանդակվել նաև շարժունությունը միևնույն երկրի սահմաններում, հատկապես նախապատրաստական այցերի համար տրամադրվող դրամաշնորհների դեպքում, երբ դրանք տրամադրվում են տվյալ երկրի Ազգային գործակալության կողմից կազմակերպվող անդրազգային սեմինարին մասնակցելու համար:

ԴԻՄՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Այն դեպքերում, երբ դիմումները պետք է ներկայացվեն հաստատությունների ու կազմակերպությունների և ոչ թե անհատների կողմից, այդ հաստատությունները/ կազմակերպությունները պետք է ունենան իրավաբանական մարմնի կարգավիճակ: Խնդրում ենք ծանոթանալ սույն Ուղեցույցի Մաս II-ին՝ տվյալ ծրագրի և/ կամ գործողության ընտրելիության վերաբերյալ ցանկացած լրացուցիչ կանոնի համար:

բ. Դիմողների բացառման չափանիշներ

Դիմողները կզրկվեն ծրագրին մասնակցելու իրավունքից, եթե նրանք գտնվում են Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի համար կիրառելի Ֆինանսական կանոնակարգի Հոդված 114-ում սահմանված հետևյալ իրավիճակներից որևէ մեկում.

1 սնանկ են կամ լուծարված, գործերը կառավարվում են դատարանների կողմից, համաձայնության են եկել պարտատերերի հետ, կասեցրել են տնտեսական գործունեությունը, այդ հարցերի առնչությամբ դատական վարույթի կողմ են դարձել, ազգային օրենսդրությամբ կամ կանոնակարգով նախատեսված նմանատիպ ընթացակարգի պատճառով առաջացած իրավիճակում են հայտնվել,

[11] Բացի «Ժան Մոնե» ծրագրից, որը բաց է ամբողջ աշխարհի բաձրագույն ուսումնական հաստատությունների համար:

2 դատական որոշմամբ, որն ունի «*res judicata»-ի ուժ,* նրանց մասնագիտական գործունեության վերաբերյալ մեղադրանք է ներկայացվել.
3 նրանք մեղավոր են ճանաչվել ծանր մասնագիտական հանցանքի մեջ, որը պայմանավորվող կողմը կարող է ցանկացած ձևով ապացուցել.
4 սոցիալական ապահովության կամ հարկային վճարումների հետ կապված պարտավորությունները չեն կատարել՝ համաձայն այն երկրի, որտեղ նրանք հիմնադրվել են, կամ պայմանավորվող կողմի երկրի կամ այն երկրի իրավական դրույթների, որտեղ պայմանագիրը պետք է ի կատար ածվի:
5 «*res judicata»*-ի ուժ ունեցող դատական որոշման առարկա են դարձել՝ կեղծիքի, կաշառակերության, հանցագործ կազմակերպության կամ Համայնքների ֆինանսական շահերին հակասող ցանկացած այլ անօրինակ գործունեության մեջ ներգրավվելու համար.
6 գնման մեկ այլ ընթացակարգի կամ Համայնքային բյուջեով ֆինանսավորվող դրամաշնորհային ընթացակարգի համաձայն, նրանք լրջորեն խախտել են պայմանագրային պարտավորությունները:

Դիմողներին դրամաշնորհ չի տրամադրվի, եթե դրամաշնորհման ընթացակարգի ժամանակ նրանք.
1 դրամաշնորհման ընթացակարգում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված կազմակերպության կամ անհատների շահերի բախման առարկա են հանդիսանում,
2 մեղադրվում են պահանջվող տեղեկատվության խեղաթյուրման կամ չտրամադրելու մեջ:

Վարչական ու ֆինանսական տույժերի կարող են ենթարկվել դրամաշնորհներ շահած այն անձինք, ովքեր մեղադրվում են խեղաթյուրման մեջ կամ լրջորեն խախտել են իրենց պայմանագրային կամ նախկինում շահած դրամաշնորհների հետ կապված պարտավորությունները՝ Ֆինանսական կանոնակարգի Հոդվածներ 93-ից 96-ի համաձայն:

գ. Ընտրության չափանիշներ

Ընտրության չափանիշները կիրառվում են գնահատելու համար, թե արդյոք դիմող կազմակերպութունը/գործընկերությունն ունի գործառնական ու ֆինանսական հզորություն, որն անհրաժեշտ է առաջարկված գործողությունը ստանձնելու համար: Ներքոհիշյալ ընտրության չափանիշները չեն վերաբերում դրամաշնորհների համար դիմող անհատներին:
Դիմող կազմակերպություններից կարող է հարկ լինի պահանջել փաստաթղթեր՝ նրանց գործառնական ու ֆինանսական հզորությունը հաստատելու համար (տես ներքևում): Եթե այդ հիման վրա Գործակալությունը համարում է, որ գործառնական ու ֆինանսական հզորությունը ապացուցված կամ բավարար չէ, կարող է մերժել դրամաշնորհի համար դիմումը կամ խնդրել լրացուցիչ տեղեկություններ ներկայացնել:

Կազմակերպությունները, որոնք համարվում են, որ ունեն բավարար ֆինանսական, մասնագիտական ու վարչական հզորություն և ֆինանսական կայունություն
Կազմակերպությունները, որոնք հիմնվել են համապատասխան ազգային օրենսդրության համաձայն որպես «հասարակական կառույցներ», ազատվում են ներքոհիշյալ դրույթներից, որոնք ներկայացված են Գործառնական ու ֆինանսական հզորության ներքո: Դեռ ավելին, ՑԿՕ-ի որոշման հավելվածի հոդված 7-ը թույլ է տալիս, որպեսզի ոչ հասարակական կազմակերպությունների վերաբերյալ օրենսդրության ներքո ստեղծված կրթություն ու ուսուցում ապահովող որոշակի կազմակերպությունները (օրինակ՝ որոշակի մասնավոր կառույցներն ու հասարակական կազմակերպությունները) նույնպես ազատված լինեն այդ դրույթներից: Արդյունքում, կրության և ուսուցման ոլորտի հաստատություններն ու կազմակերպությունները նույնպես, որոնք վերջին երկու տարվա ընթացքում իրենց տարեկան եկամուտների ավելի քան 50% ձեռք են բերել հասարակական աղբյուրներից (բացառությամբ Համայնքների դրամաշնորհային ֆոնդերի[12]) կամ վերահսկվում են հասարակական կառույցների կամ դրանց ներկայացուցիչների կողմից, կարող են համարվել, որ ունեն բավարար ֆինանսական ու վարչական հզորություն և կայունություն:

[12] Դրամաշնորհը կտրամադրվի, եթե այն ստացվում է կանոնավոր կերպով՝ հզորության ու կայունության հասնելու համար:

Այնուամենայնիվ, այդ դիմողները պետք է ստորագրեն պարտավորությունների կատարման հռչակագիր, որը սովորաբար ներկայացվում է դիմումաձևին կից, որտեղ նշվում է, որ նրանք համաձայն են վերոհիշյալ պայմանների հետ: Եվրոպական Հանձնաժողովին ու գործակալություններին իրավունք է վերապահվում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր՝ սույն հռչակագրի վավերությունն ապացուցելու համար:

Գործառնական հզորություն

Դիմողները կգնահատվեն առաջարկված գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական կարողությունների և որակավորումների համաձայն:
Եթե դիմումաձևերում պահանջվում է, դիմողները պետք է ներկայացնեն ծրագրում ընդգրկված հիմնական անձնակազմի ինքնակենսագրությունները՝ որպես համապատասխան մասնագիտական փորձառության ապացույց: Միավորումների համար սույն պահանջը վերաբերում է բոլոր գործընկերներին:
Այդ փաստաթղթերը պետք է ներկայացվեն Եվրոպական Միության պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Դրամաշնորհման ընթացակարգը կարող է պահանջել, որպեսզի դրանք ներկայացվեն այն լեզվով, ինչ լեզվով ներկայացված է դիմումը:

Ֆինանսական հզորություն

Դիմողները պետք է ունենան ֆինանսական կայուն ու բավարար միջոցներ, որոնք անհրաժեշտ են ծրագրի իրականացման ժամանակահատվածում իրենց գործունեությունը շարունակելու և ծրագրի համատեղ ֆինանսավորման համար:
Վերոհիշյալ «Կազմակերպություններ, որոնք ունեն բավարար ֆինանսական, մասնագիտական ու վարչական հզորություն և ֆինանսական կայունություն» մասում նկարագրված կազմակերպություններից բացի, եթե դիմումաձևում պահանջվում է, դիմողները պետք է ներկայացնեն իրենց ֆինանսական հզորության մասին վկայող հետևյալ փաստաթղթերը.

- 25.000 եվրո-ից ավել դրամաշնորհային դիմումների համար՝ ամենավերջին ֆինանսական այն տարվա[13] պաշտոնական տարեկան գումարները, որի հաշվարկները փակված են.
- 500.000 եվրո-ից ավել դրամաշնորհային դիմումների համար՝ արտաքին աուդիտի հաշվետվությունը, որն իրականացվել է հաստատված աուդիտորի կողմից և որտեղ նշված են վերջին տարվա գումարները:

Սովորաբար 25.000 եվրո-ից ցածր դրամաշնորհների համար ֆինանսական հզորության ապացույց չի պահանջվում:
Դիմումի գնահատման և դրամաշնորհային դիմումի առնչությամբ դիմողի ֆինանսական հզորության ուսումնասիրության արդյունքից կախված՝ դիմողին կարող է առաջարկվել Դրամաշնորհային համաձայնագիր/որոշում, որը պարտավորեցնում է ներկայացնել երաշխավորություն նախնական ֆինանսավորման համար, Դրամաշնորհային համաձայնագիր՝ առանց նախնական ֆինանսավորման և Դրամաշնորհային համաձայնագիր մաս առ մաս նախնական ֆինանսավորմամբ:

դ. Որակավորման չափանիշները

Որակավորման չափանիշները կիրառվում են դրամաշնորհային դիմումները գնահատելու նպատակով:
Վավեր համարվող դիմումները կգնահատվեն յուրաքանչյուր գործողության համար հրապարակված որակավորման չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով առաջարկների համար համապատասխան հրավերքում սահմանված գերակայությունները: Սույն Ուղեցույցի Մաս II-ում զետեղված յուրաքանչյուր գործողության նկարագիրը ներառում է որակավորման չափանիշներ, որոնք կկիրառվեն գնահատման ժամանակ: Գնահատման մեխանիզմները և որակավորումների չափանիշներին համապատասխանությունը կիրապարակվի ազգային գործակալությունների կամ Գործադիր գործակալության կայք էջերում: Ապակենտրոնացված գործողությունների դեպքում, այնուամենայնիվ, համապատասխանության հարցի քննարկումը նույնն է Ազգային բոլոր գործակալությունների համար: Ազգային որակավորումների ցանկացած լրացուցիչ չափանիշ իր բովանդակությամբ տարբեր երկրներում կարող է տարբեր լինել, բայց նրանց ընդհանուր կշիռը

[13] «Պաշտոնական» համարվում են այն գումարները, որոնք վկայակոչվում են համապատասխան արտաքին մարմնի և/ կամ հրապարակվել են և/ կամ հաստատվել կազմակերպության գլխավոր հավաքի կողմից:

նույնը կլինի բոլոր երկրների համար: Ազգային որակավորումների ցանկացած նման լրացուցիչ չափանիշ կհրապարակվի համապատասխան Ազգային գործակալության կայք էջում:

Ցկյանս կրթության ծրագրի (ՑԿԾ) ստեղծման վերաբերյալ որոշումը խթանում է այն անհատների կամ կազմակերպությունների մասնակցությունն ապակենտրոնացված գործողություններում, որոնք նախկինում չեն մասնակցել Ցկյանս կրթության ծրագրին կամ դրա նախորդներին (Հոդված 1.3.զ): Հատուկ կարիքավոր կամ աննպաստ վիճակում գտնվող խմբերի մասնակցությունը նույնպես խրախուսվում է:

Դրամաշնորհները տրամադրվում են գոյություն ունեցող բյուջեի և դրմաշնորհային դիմումների համապատասխան որակի հիման վրա՝ հաշվի առնելով Եվրոպական Միության (ԵՄ) առավելագույն ներդրումը և, ըստ անհրաժեշտության, ԵՄ-ի կողմից տրամադրվող համաֆինանսավորման առավելագույն տոկոսադրույքը:

Բոլոր դիմողները գրավոր կտեղեկացվեն գնահատման արդյունքների մասին:

Դրամաշնորհների տրամադրման արդյունքները կհրապարակվեն համապատասխան Գործակալության կայք էջում՝ որոշումներն ընդունելուց անմիջապես հետո, և բոլոր ատյաններում՝ ամենաուշը դրամաշնորհների տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելուց 6 ամիս անց: Կհրապարակվի շահառուի անունը, օժանդակվող ծրագրի անվանումը և տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը (և, ըստ անհրաժեշտության, համաֆինանսավորման տոկոսադրույքը): Անհատական շարժունության դրամաշնորհի համար ընտրված անձանց անձնական տվյալները, այնուամենայնիվ, չեն հրապարակվի:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.Ա. ԲՈԼՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌԵԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գործողության իրականացման համար դրամաշնորհ տրամադրելու վերաբերյալ որոշումը պաշտոնական բնույթ է ստանում կամ երկու կողմերի (Գործակալություն և դրամաշնորհի շահառու) կողմից ստորագրված Դրամաշնորհային համաձայնագրի կամ գործակալության միակողմ որոշման միջոցով, որի մասին տեղակցվում է դրամաշնորհի շահառուն:

Այդ համաձայնագիրը կամ որոշումը պետք է ներառի վճարման վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես նաև բանկային հաշիվը կամ ենթահաշիվը, որին գումարները պետք է փոխանցվեն:

Յուրաքանչյուր ծրագրի արդյունքում կարող է տրամադրվել միայն մեկ դրամաշնորհ համայնքի բյուջեից: Դրամաշնորհի տրամադրման նպատակը կարող է շահառուի համար շահույթի ապահովումը չլինել: Դրամաշնորհները կարող են հետահայաց չշնորհվել այն գործողությունների համար, որոնք արդեն ավարտվել են դրամաշնորհային դիմումի ներկայացման պահին:

Դրամաշնորհը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել կամ ցածր լինել դիմողի կողմից նախապես պահանջված գումարից:

Դրամաշնորհը խթան է հանդիսանում այն ծրագրի կամ գործողության իրականացման համար, որն առանց Եվրոպական Միության ֆինանսական օժանդակության հնարավոր չէր լինի, և որը հիմնված է համաֆինանսավորման սկզբունքի վրա:

Դրամաշնորհային համաձայնագրով կսահմանվեն Համաձայնագիրը կամ Որոշումը փոփոխելու, դադարեցնելու և ընդհատելու պայմաններն ու ժամանակային սահմանափակումները: Շահառուների կողմից պայմանագրային պարտավորությունների լուրջ խախտումների դեպքում, նրանց համաձայնագրերը կարող են չեղյալ հայտարարվել և/ կամ ենթարկվել ֆինանսական տույժերի:

Դրամաշնորհային համաձայնագրերը կամ որոշումները կարող են փոփոխվել միայն լրացուցիչ գրավոր Համաձայնագրերի կամ Որոշումների համաձայն: Նման լրացուցիչ Համաձայնագրերը կամ Որոշումները նպատակ չեն հետապնդում այնպիսի փոփոխություններ կատարել, որոնք հարցականի տակ կդնեն դրամաշնորհ տրամադրելու վերաբերյալ որոշումը կամ կհակասեն դիմողների նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովման սկզբունքին: Լրացուցիչ Համաձայնագիր կամ որոշում չի կարող կնքվել Դրամաշնորհի տրամադրման վերաբերյալ նախնական Համաձայնագրով կամ Որոշմամբ սահմանված ծախսերի ու գործողությունների վավերության ժամանակահատվածից հետո:

4.Բ. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Խնդրում ենք հաշվի առնել, որ Եվրոպական Միության (ԵՄ) կողմից տրամադրվող ֆինանսական օժանդակության համատեքստում և այս ամբողջ փաստաթղթում «ծրագիր» եզրույթը կիրառվում է մաս 1.Բ.-ում նկարագրված գործողությունների ցանկացած տեսակ բնորոշելու համար:

ԵՄ օժանդակությունը կարող է լինել միանվագ գումար[14], կայուն փոխարժեքով[15] դրամաշնորհ, որը հիմնված է միավոր ծախսերի սանդղակի վրա, կամ ընդունելի ծախսերի տոկոսադրույքի փոխհատուցում: Դրամաշնորհի տեսակից կախված՝ հնարավոր է դրամաշնորհային օժանդակության այս բոլոր տեսակների կամ դրանցից որոշի համակցումը: Համապատասխանաբար պետք է կազմվի ծրագրի բյուջեն:

- Միանվագ գումարային դրամաշնորհների տրամադրման դեպքում շահառուն պետք է ավելի շատ կարողանա ապացուցել, որ գործողությունը, որի համար տրամադրվում է դրամաշնորհը, իրոք իրականացվել է և ոչ թե որքան գումար է ծախսվել: Եթե օժանդակվող գործողությունը բավարար ձևով է իրականացվել, տրվում է դրամաշնորհային ողջ գումարը: Թերացումների դեպքում սովորաբար կպանջվի տրամադրված դրամաշնորհի (որոշ մասի) փոխհատուցում՝ յուրաքանչյուր ապակենտրոնացված գործողության համար սահմանված չափանիշների հիման վրա:
- Միավոր ծախսերի (օրինակ՝ առավելագույն չափով օրապահիկները) սանդղակի կիրառմամբ կայուն փոխարժեքով տրամադրված դրամաշնորհների դեպքում, շահառուն պարտավոր չէ արդարացնել ընթացիկ ծախսերը, բայց պետք է կարողանա ապացուցել այն գործողությունների իրականացված լինելը, որոնց համար կոնկրետ դրամաշնորհային գումար է տրամադրվել (օրինակ՝ արտասահմանում անցկացված օրերի քանակով է որոշվում այն առավելագույն գումարը, որը կարող է տրամադրվել անհատին այնտեղ մնալու համար):
- Իրական ծախսերի հիման վրա դրամաշնորհ (կամ մի մասը) տրամադրելու դեպքում շահառուն պետք է պահպանի և անհրաժեշտության դեպքում ներկայացնի իրական ծախսերի ապացույցները:
- Թույլատրելի ծախսեր. Եվրոպական Միության կողմից համատեղ ֆինանսավորվող ծրագրի բյուջեով թույլատրելի ծախսերի տեսակը: Սույն Ուղեցույցում ներկայացված կանոնները կիրառվում են որպես հիմք դիմումում ներկայացված ծախսերի վերանայման համար: Եթե ծախսերը չեն համապատասխանում այս կանոններին, ամբողջովին կամ մասամբ «անթույլատրելի» կհամարվեն (այսինքն՝ Եվրոպական Միության կողմից համատեղ ֆինանսավորման ենթակա չեն): Վերլուծության արդյունքում հաստատված ծրագրային բյուջեն կներառի միայն թույլատրելի ծախսերը:
- Թույլատրելի ծախսերի տոկոսադրույքի փոխհատուցում. դիմողը սահմանելու է իրական ծախսերը (թույլատրելի առավելագույն տոկոսադրույքներով): Եվրոպական Միության ֆինանսավորումը կհաշվարկվի թույլատրելի իրական ծախսերի նկատմամբ տոկոսադրույք կիրառելու միջոցով: Ներդրումը կնվազեցվի, եթե վերջնական հաշվետվության փուլում ծրագիրը չի իրականացվել կամ միայն մասամբ է իրականացվել կամ անթույլատրելի ծախսեր են եղել: Եթե հաշվետու ծախսերը նախատեսվածից քիչ են, ներդրումը կնվազեցվի՝ կիրառելով Դրամաշնորհային համաձայնագրում ֆիքսված տոկոսադրույքը: Մանրամասները կներկայացվեն Դրամաշնորհային համաձայնագրերի կառավարման համար նախատեսված փաստաթղթերում:

4Գ. ԱՆՀԱՏՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Շարժունության դրամաշնորհները հիմնված են ծախսերի տարբեր բաղադրիչների վրա: Ներքոհիշյալ տոկոսադրույքները ներկայացնում են առավելագույն գումարները:

[14] «Միանվագ գումարներն ընդհանուր առմամբ կհոգան որոշակի ծախսեր, որոնք անհրաժեշտ են գործողությունն իրականացնելու կամ շահառուի տարեկան գործունեության համար՝ համաձայնագրի պայմանների համաձայն կամ հաշվարկների հիման վրա»: (Ֆինանսական կանոնակարգ, Հոդված 108ա(ա), կետ (բ) և Ֆինանսական կանոնակարգի կանոնների իրականացում, Հոդված 180ա, կետ 2: [15] Կայուն փոխարժեքով ֆինանսավորմամբ կհոգան առանձնահատուկ տեսակի ծախսեր, որոնք նախօրոք հստակորեն սահմանված են կամ նախօրոք ֆիքսված տոկոսադրույքի կամ ստանդարտ միավոր արժեքների սանդղակի կիրառման միջոցով»: (Ֆինանսական կանոնակարգ, Հոդված 108ա(1), կետ (գ) և Ֆինանսական կանոնակարգի կանոնների իրականացում, Հոդված 180ա, կետ 3.

Շարժունության գործողությունների համար նախատեսված բյուջեն հիմնված է կենսապահովման, ճանապարհածախսերի և այլ ծախսերի (համակցման) վրա: Այն դեպքերում, երբ ծախսերը հիմնված են միավոր արժեքների սանդղակի կամ իրական արժեքների վրա, կիրառվում են թույլատրելիության ընդհանուր չափանիշները (տես ներքևում):

Կարճաժամկետ շարժունության դեպքում (բացառությամբ «Գրունդվիգ» գործնական հանդիպումների) ճանապարհածախսը հիմնված է իրական արժեքի վրա: 13 շաբաթ կամ ավել տևողությամբ շարժունության, ինչպես նաև «Գրունդվիգ» գործնական հանդիպումների դեպքում, ճանապարհածախսը նախատեսվում է հոգալ կենսապահովման միանվագ գումարներով և ճանապարհորդության համար լրացուցիչ դրամաշնորհ չի տրամադրվում:

Ա. Կենսապահովման ծախսեր

Բոլոր տեսակի շարժունության գործողությունների դեպքում կենսապահովման ծախսերի համար օժանդակությունը կլինի կայուն փոխարժեքով հաշվարկված դրամաշնորհի տեսքով, որը հաշվարկվում է օրեկան, շաբաթական[16] կամ ամսեկան տոկոսադրույքներով: Կենսապահովման ծախսերը ներառում են կացարանը, սնունդը, տեղում ճանապարհորդելը, հեռահաղորդակցությունը, ներառյալ ֆաքս և ինտերնետ, ապահովագրությունն ու այլ տեսակի կենցաղային ծախսեր:
Մինչև 12 շաբաթը ներառյալ տևողությամբ շարժունության գործողությունները (բացի «Գրունդվիգ» գործնական հանդիպումներից), տրամադրվող դրամաշնորհները չեն ներառում ճանապարհածախսը. այդ ծախսերը կհատուցվեն իրական արժեքների հիման վրա: Առնվազը 13 լրիվ շաբաթ տևողությամբ շարժունության գործողությունների համար տրամադրվող դրամաշնորհները կհամարվեն կայուն փոխարժեքով ընդհանուր օժանդակություն բոլոր տեսակի ծախսերը, ներառյալ՝ ճանապարհածախսերը հոգալու համար:
Կենսապահովման ծախսերի համար օժանդակությունը հաշվարկվում է հյուրընկալող երկրի միավոր ծախսերի սանդղակի հիման վրա:

Հատուկ կարիքավոր մարդիկ կարող են օգտվել ֆինանսական հատուկ միջոցներից. կենսապահովման և ճանապարհորդային ծախսերի համար դրամաշնորհները կգնահատվեն յուրաքանչյուր դեպքի համար առանձին՝ իրական ծախսերից ելնելով: Նման դեպքում դրամաշնորհը կարող է ապահովել ուղեկցող անձի կենսապահովման և ճանապարհային ծախսերը, եթե դրանք արդարացված են: Որոշ գործողություններում, նման հանգամանքների առկայության դեպքում, տրամադրվող դրամաշնորհի չափը կարող է առավելագույնի հասնել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Դիմողները պետք է հաշվի առնեն, որ հետևյալ աղյուսակներում նշված գումարները վերաբերում են ծրագրի մասնակից բոլոր երկրներում թույլատրելի համարվող բացարձակ առավելագույնին: Առանձնահատուկ Ազգային գործակալությունների կողմից տրամադրվող իրական գումարները տարբեր երկրներում տարբեր են, տարբերվում են նաև ըստ գործողությունների, և որոշ դեպքերում կարող են ավելի ցածր լինել, քան նրանցում նշված առավելագույն գումարները: Տրամադրվող իրական գումարները որոշելիս՝ Ազգային գործակալությունները հաշվի են առնում հատկապես իրենց համար մատչելի ընդհանուր բյուջեն, իրենց երկրում պահանջարկի ծավալը և բոլոր շահառուների նկատմամբ հավասարաչափ վերաբերմունքի կարիքը: Ուստի դիմողներին խորհուրդ է տրվում ուսումնասիրել իրենց երկրի համապատասխան Ազգային գործակալության կայք էջը՝ ճշտելու այն գումարների իրական չափը, որ կարող է իրենց տրամադրվել դիմումի հաջող ընթացքի դեպքում:

ԿՈՄԵՆԻՈՒՍ

«Կոմենիուս» բազմակողմ ծրագրերի շրջանակներում «Կոմենիուս» դասախոսների նախնական ուսուցման շարժունության համար դիմողները պետք է ուսումնասիրեն EACEA կայք էջում կենսապահովման ծախսերի աղյուսակը՝ յուրաքանչյուր շաբաթվա համար թույլատրելի ծախսերի առավելագույն չափը պարզելու համար:

[16] Այս համատեքստում շաբաթը համարժեք է յոթ հաջորդական լրիվ աշխատանքային օրերի շարժունության ժամանակահատվածին, ճանապարհը՝ ներառյալ:

Աղյուսակ 1ա. Ցկյանս կրթության ծրագիր – Շարժունություն – Կենսապահովում - Առավելագույն տոկոսադրույքներ (եվրոյով)՝ ըստ հյուրընկալող յուրաքանչյուր երկրի և մնալու տևողության *(12 շաբաթից ավել «էրազմուս» շարժունության համար տես Աղյուսակ 1բ)*

	Ճանապարհածախսի ու վիզային հետ կապված ծախսերի բացառում									Ճանապարհածախսի ու վիզային հետ կապված ծախսերի ներառում	
	Առաջին շաբաթվա ընդհանուր գումարները						Ընդհանուր գումարը		Լրացուցիչ գումար յուրաքանչյուր շաբաթվա համար (շաբաթներ 3 - 12)*	13 լրիվ շաբաթների ընդհանուր գումարը **	Լրացուցիչ գումար յուրաքանչյուր շաբաթվա համար (շաբաթներ 14 - 45)*
	1 օր	2 օր	3 օր	4 օր	5 օր	6 օր	1շաբաթ (7 օր)	2շաբաթ			
BE	210	420	630	840	1.050	1.260	1.470	2.007	196	**4.504**	196
BG	130	260	390	520	650	780	910	1.243	122	**2.796**	122
CZ	180	360	540	720	900	1.080	1.260	1.720	168	**3.860**	168
DK	290	580	870	1.160	1.450	1.740	2.030	2.772	271	**6.224**	271
DE	210	420	630	840	1.050	1.260	1.470	2.007	196	**4.504**	196
EE	170	340	510	680	850	1.020	1.190	1.625	159	**3.650**	159
EL	200	400	600	800	1.000	1.200	1.400	1.912	187	**4.294**	187
ES	210	420	630	840	1.050	1.260	1.470	2.007	196	**4.504**	196
FR	250	500	750	1.000	1.250	1.500	1.750	2.389	234	**5.368**	234
IE	260	520	780	1.040	1.300	1.560	1.820	2.485	243	**5.580**	243
IT	240	480	720	960	1.200	1.440	1.680	2.294	224	**5.148**	224
CY	190	380	570	760	950	1.140	1.330	1.816	178	**4.082**	178
LV	160	320	480	640	800	960	1.120	1.529	150	**3.438**	150
LT	160	320	480	640	800	960	1.120	1.529	150	**3.438**	150
LU	210	420	630	840	1.050	1.260	1.470	2.007	196	**4.504**	196
HU	160	320	480	640	800	960	1.120	1.529	150	**3.438**	150
MT	190	380	570	760	950	1.140	1.330	1.816	178	**4.082**	178
NL	230	460	690	920	1.150	1.380	1.610	2.198	215	**4.936**	215
AT	220	440	660	880	1.100	1.320	1.540	2.103	206	**4.726**	206

* 3-12 և 14-45 շաբաթների դեպքում, հաշվվում են լրացուցիչ լրիվ շաբաթներ՝ «3-12 և 14-45 շաբաթների համար լրացուցիչ գումարներ» սյունյակներում նշված գումարների հիման վրա: ** Դրա մեջ մտնում է ճանապարհորդության և վիզայի ծախսերի համար նախատեսված հատուկ գումարը, քանի որ դրանք ավելանում են 13-րդ շաբաթից հետո: «Ոչ լրիվ» շաբաթվա համար հաշվարկի մեթոդը հետևյալն է՝ լրացուցիչ օրերի թիվը բազմապատկվում է՝ «3-12 և 14-45 շաբաթների համար լրացուցիչ գումարներ» սյունյակներում նշված գումարի 1/7-ով: Բացառություն է կազմում երկրորդ ոչ լրիվ շաբաթը, որի համար հաշվարկի սկզբունքը հետևյալն է՝լրացուցիչ օրերի թիվը բազմապատկած մեկ և երկու շաբաթների գումարային տարբերությունների 1/7-ով:

Աղյուսակ 1բ. Ցկյանս կրթության ծրագիր 2009 - Էրազմուս – Շարժունության կենսապահում - Առավելագույն տոկոսադրույքներ (եվրոյով)՝ ըստ հյուրընկալող յուրաքանչյուր երկրի, ներառյալ ճանապարհորդությունը

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ	Ամսեկան դրույքաչափ 3-ից 12 ամիս
Բելգիա – BE	780
Բուլղարիա – BG	500
Չեխիայի հանրապետ. – CZ	665
Դանիա – DK	1.075
Գերմանիա – DE	780
Էստոնիա – EE	620
Հունաստան – EL	728
Իսպանիա – ES	799
Ֆրանսիա – FR	922
Իռլանդիա – IE	952
Իտալիա – IT	877
Կիպրոս – CY	713
Լատվիա – LV	597
Լիտվա – LT	590
Լյուքսեմբուրգ – LU	780
Հունգարիա – HU	594
Մալթա – MT	706
Նիդերլանդներ – NL	859
Ավստրիա – AT	833
Լեհաստան – PL	597
Պորտուգալիա – PT	717
Ռումինիա– RO	504
Սլովենիա – SI	676
Սլովակիա – SK	687
Ֆինլանդիա – FI	911
Շվեդիա – SE	896
Միացյալ Թագավորություն – UK	1.086
Իսլանդիա – IS	896
Լիխտենշտայն – LI	937
Նորվեգիա – NO	1.086
Թուրքիա – TR	582

Բ. Ճանապարհածախս

Մինչև 12 շաբաթ ներառյալ տևողությամբ շարժունության գործողությունների համար (բացի «Գրունդվիգ» գործնական հանդիպումներից) ԱԳ-ն կփոխհատուցի ճանապարհային ծախսերը՝ ելնելով իրական ծախսերից, ներառյալ մուտքի/ ելքի վիզաները, ըստ անհրաժեշտության, ամբողջովին կամ մասամբ (կիրառելով առավելագույն տոկոսադրույք): Ճանապարհորդության հետ կապված ցանկացած այլ ծախս թույլատրելի չի համարվում:

Եթե անհատները բնակվում են Խորհրդի 2001/822/ԵՀ որոշման մեջ թվարկված արտասահմանյան որևէ երկրում կամ տարածքում (տես Երկրներ) կամ մտադիր են մեկնել այդ տարածքներից որևէ մեկը, իրական ճանապարհածախսը, բացի «Գրունդվիգ» գործնական հանդիպումներից, լրիվ կփոխհատուցվի՝ անկախ շարժունության գործողության տևողությունից:

Եթե ճանապարհածախսը փոխհատուցվում է իրական ծախսերի հիման վրա, նույն կանոնները կիրառելի են բազմակողմ ծրագրերի, ցանցերի, լրացուցիչ միջոցառումների, ուսումնասիրությունների և համեմատական հետազոտությունների իրականացման համար պահանջվող ճանապարհածախսերի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ճանապարհորդային ապահովագրությունը և չեղյալ հայտարարելու հետ կապված ցանկացած ծախս համարվում է կենսապահովման ծախսերի մաս:

Գ. Այլ ծախսեր

ԿՈՄԵՆԻՈՒՍ ԵՎ ԳՐՈՒՆԴՎԻԳ

Իրական ծախսերի հիման վրա տրամադրվող օժանդակությունը կարող է լինել առավելագույնը 150 եվրո օրեկան՝ «Կոմենիուսի» դասընթացի կամ գործնական հանդիպման, դպրոցական կրթության անձնակազմի որակավորումը բարձրացնող վերապատրաստման և «Գրունդվիգ» դասընթացի կամ գործնական հանդիպման, մեծահասակների կրթության անձնակազմի որակավորումը բարձրացնող վերապատրաստումների մասնակցության համար:

Կոմենիուս, Գրունդվիգ, Լեոնարդո դա Վինչի
Մանկավարժական, լեզվաբանական ու մշակութային դասընթացների մասնակցության համար տրամադրվող օժանդակությունը կարող է հասնել յուրաքանչյուր մասնակցի համար առավելագույնը 500 եվրո միանվագ գումարի, բացառությամբ «Գրունդվիգի» ներքո իրականացվող Ավագ կամավորական ծրագրերի (որոնց դեպքում անհատ մասնակիցների հետ կապված «Այլ ծախսերը» փոխհատուցվում են ներքոհիշյալ մաս 4.Դ-ում):

4.Դ. ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (ԷՐԱԶՄՈՒՍ, ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ ԵՎ ԳՐՈՒՆԴՎԻԳ)

«Էրազմուս», «Լեոնարդո դա Վինչի» և որոշ «Գրունդվիգ» շարժունության գործողությունները, շարժունության միջոցառումները կազմակերպվում են հաստատությունների կողմից, ինչպիսիք են՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները, ՄԿՈՒ/ մեծահասակների կրթության կազմակերպությունները: Շարժունության այդ գործողությունները պահանջում են հստակ պարտավորվածություն ուղարկող կամ հյուրընկալող կազմակերպության կողմից՝ շարժունության ժամանակահատվածում բոլոր հարցերում (մանկավարժական, ինչպես նաև կազմակերպչական) որակի ապահովման գործում: Այդ կազմակերպությունները պատասխանատու են անհատների համար նախատեսված շարժունության դրամաշնորհների կառավարման համար: Մասնակիցների համար նախատեսված դրամաշնորհների չափն ու կանոնները ներկայացված են վերևում: Բացի այդ, կազմակերպություններն օժանդակություն են ստանում շարժունության միջոցառումների կազմակերպման ծախսերը հոգալու համար: Այդ օժանդակությունը տրվում է կազմակերպությանը, և ոչ թե անհատին:[17]

ԷՐԱԶՄՈՒՍ ԵՎ ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ

<u>Շարժունությունը կազմակերպելու համար ուղարկող հաստատություններին/ միավորումներին տրամադրվող դրամաշնորհ</u> Կիրառվում է միավոր ծախսերի առավելագույն սանդղակ շարժունության կազմակերպման համար ուղարկող հաստատություններին/ միավորումներին տրամադրվող դրամաշնորհը հաշվարկելու համար: Սահմանված են սանդղակներ մեկնողների յուրաքանչյուր խմբի համար, իսկ «Էրազմուսի» դեպքում՝ ձեռնարկություններից հրավիրված դասավանդող անձնակազմի համար: Սանդղակ 1-ը վերաբերում է առաջին 25-ին, հաջորդ սանդղակը նախատեսված է 26-100 մարդկանց համար, և այլն:

[17] Յուրաքանչյուր անհատի/ շահառուի համար նախատեսված գումարները եվրոյով են, բացի այն դեպքերից, երբ այլ ցուցումներ կան:

Աղյուսակ 2. Էրազմուս և Լեոնարդո դա Վինչի – Բարձրագույն ուսումնական հաստատություններին և տեղավորման միավորումներին տրամադրվող դրամաշնորհների հաշվարկման համար կիրառվող միավոր ծախսերի առավելագույն սանդղակը, որի նպատակն է՝ ուսանողների ու անձնակազմի շարժունության, ներառյալ «Էրազմուս» ուսանողների տեղավորման որակի ապահովումը

Սանդղակ 1 (1-ից 25-րդ անձը)	390 €/շահառու
Սանդղակ 2 (26-ից 100-րդ անձը)	315 €/ շահառու
Սանդղակ 3 (101-ից 400-րդ անձը)	225 €/ շահառու
Սանդղակ 4 (> 400-րդ անձը)	180 €/ շահառու

ԷՐԱԶՄՈՒՍ ԵՎ ԳՐՈՒՆԴՎԻԳ

Լեզվի արագացված «Էրազմուս» դասընթացներ (EILC), «Էրազմուս» արագացված ծրագրեր (IP) և «Գրունդվիգ» գործնական հանդիպումներ կազմակերպող հաստատություններին տրամադրվող դրամաշնորհներ

Դրամաշնորհը տրամադրվում է միանվագ գումարի տեսքով: Բելգիայում «EILC» դասընթացների համար առավելագույն գումար է սահմանվել 6.160 եվրո, իսկ «IP» և «Գրունդվիգ» գործնական հանդիպումների համար՝ 7.180 եվրո, ինչպես նաև ակնկալվում է, որ շահառու կազմակերպությունն իր հետ կբերի ֆինանսավորման սեփական աղբյուրները: Մյուս երկրների համար առավելագույն գումարը ձեռք է բերվում՝ «Eurostat Cost of Living Index»-ին [որը նախատեսված է վերջին տարվա համար] (տես **Աղյուսակ 3ա ներքևում**):

Աղյուսակ 3ա. Էրազմուս և Գրունդվիգ - Լեզվի արագացված «Էրազմուս» դասընթացներ (EILC), «Էրազմուս» արագացված ծրագրեր (IP) և «Գրունդվիգ» գործնական հանդիպումների կազմակերպման համար նախատեսված առավելագույն միանվագ գումարները (եվրո)

Երկիր			Էրազմուս EILC	Էրազմուս IP և Գրունդվիգ Գործնական հանդիպումներ
Բելգիա	BE	Բելգիա	6.160	7.180
Բուլղարիա	BG	Բուլղարիա	3.950	4.600
Չեխիայի Հանր.	CZ	Չեխիայի Հանրապետ.	5.250	6.130
Դանիա	DK	Դանիա	8.500	9.900
Գերմանիա	DE	Գերմանիա	6.170	7.190
Էստոնիա	EE	Էստոնիա	4.900	5.710
Հունաստան	EL	Հունաստան	5.750	6.700
Իսպանիա	ES	Իսպանիա	6.300	7.340
Ֆրանսիա	FR	Ֆրանսիա	7.280	8.490
Իռլանդիա	IE	Իռլանդիա	7.520	8.760
Իտալիա	IT	Իտալիա	6.930	8.080
Կիպրոս	CY	Կիպրոս	5.620	6.560
Լատվիա	LV	Լատվիա	4.730	5.510
Լիտվա	LT	Լիտվա	4.650	5.420
Լյուքսեմբուրգ	LU	Լյուքսեմբուրգ	6.160	7.180
Հունգարիա	HU	Հունգարիա	4.690	5.470
Մալթա	MT	Մալթա	5.580	6.510
Նիդերլանդներ	NL	Նիդերլանդներ	6.790	7.910
Ավստրիա	AT	Ավստրիա	6.560	7.650
Լեհաստան	PL	Լեհաստան	4.720	5.500
Պորտուգալիա	PT	Պորտուգալիա	5.660	6.600
Ռումինիա	RO	Ռումինիա	3.990	4.650
Սլովենիա	SI	Սլովենիա	5.350	6.230
Սլովակիա	SK	Սլովակիա	5.430	6.330
Ֆինլանդիա	FI	Ֆինլանդիա	7.180	8.370
Շվեդիա	SE	Շվեդիա	7.080	8.250
Միացյալ Թագավորություն	GB	Միացյալ Թագավորություն	8.590	10.010
Իսլանդիա	IS	Իսլանդիա	7.060	8.230
Լիխթենշթայն	LI	Լիխթենշթայն	7.410	8.640
Նորվեգիա	NO	Նորվեգիա	8.580	10.000
Թուրքիա	TR	Թուրքիա	4.600	5.360

ԳՐՈՒՆԴՎԻԳ – ՓՈՐՁԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Կամավորներ ուղարկող և հյուրընկալող կազմակերպությունները ստանում են մեկ դրամաշնորհ, որն ունի հետևյալ բաղադրիչները.

1. ուղարկելու հետ կապված ծախսեր.

ա) կայուն փոխարժեքով դրամաշնորհ, որը կախված է մեկնող կամավորների քանակից, և որի նպատակն է՝ հոգալ կազմակերպչական ծախսերը, ինչպես նաև իրենց կողմից ուղարկվող կամավորների մշակութային, լեզվական ու անհատական նախապատրաստումը և վերադառնալիս նրանց ունեցած փորձառության հետ կապված ծախսերը (տես **Աղյուսակ 3b** ներքևում).

բ) իրենց կողմից ուղարկված կամավորների ճանապարհածախսի համար փոփոխական դրամաշնորհ, որը հիմնավորված է և պետք է համարվի իրական ծախս (տես Մաս 4Գ վերևում):

2. հյուրընկալման ծախսեր.

ա) կայուն փոխարժեքով դրամաշնորհ, որը կախված է ժամանող կամավորների թվից և նպատակ ունի հոգալ կազմակերպչական ծախսերը որպես հյուրընկալող կազմակերպություն (տես **Աղյուսակ 3բ** ներքևում).
բ) կայուն փոխարժեքով դրամաշնորհ յուրաքանչյուր կամավորի համար, որը կախված է միավոր ծախսերի սանդղակից և նպատակ ունի կամավորական ժամանակահատվածում հոգալ ժամանող կամավորների կացարանի, ապահովագրության, տեղում փոխադրվելու, ինչպես նաև նոր ժամանող կամավորներին կամավորության ժամանկահատվածում աջակցելու հետ կապված ծախսերը (տես **Աղյուսակ 1ա** վերևում):

Աղյուսակ 3բ. Գրունդվիգ փորձառուների կամավորական ծրագրերը – փորձառու կամավորների շարժունությունը կազմակերպելու համար նախատեսված միավոր ծախսերի առավելագույն սանդղակ

	Յուրաքանչյուր կամավորի համար
Ուղարկող կազմակերպություն	800 եվրո
Հյուրընկալող կազմակերպություն	390 եվրո

4.Ե. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործընկերությունները (հաճախ փոքրամասշտաբ) ծրագրեր են առնվազն 3 երկրների կազմակերպությունների միջև գործնական համագործակցության համար, բացառությամբ՝ «Կոմենիուսի» ներքո իրականացվող երկկողմ գործընկերությունների, որոնք ներառում են միայն երկու երկիր: Յուրաքանչյուր գործընկերության մեջ մեկ հաստատություն/ կազմակերպություն հանդես է գալիս որպես «համակարգող», մյուսները՝ որպես գործընկերներ: Գործընկերության համար դիմումը պատրաստվում է բոլոր մասնակից հաստատությունների կողմից համատեղ, սակայն յուրաքանչյուր հաստատություն ստանում է իր դրամաշնորհը՝ սեփական Ազգային գործակալությունից: Գործընկերության դրամաշնորհները տրամադրվում են երկու տարի ժամկետով:
Գործընկերությունների գործունեությունը բաղկացած է գործընկերոջ կազմակերպությունում կազմակերպվող **տեղական գործողություններից** (ուսուցողական միջոցառումներ, պրակտիկա, հետազոտություն և այլն) և **շարժունության միջոցառումներից**, որոնց նպատակն է՝ այցելել արտասահմանում գտնվող գործընկեր հաստատություններ (ծրագրային հանդիպումներ, ուսումնական այցեր, անձնակազմի փոխանակում, դպրոցականների փոխանակում և այլն):
Գործընկերության ծրագրերի կանոնները գրեթե նույնն են, անկախ այն ծրագրից, որի ներքո իրականացվում են (Կոմենիուս, Գրունդվիգ, Լեոնարդո դա Վինչի), թեև տրամադրվող դրամաշնորհները որոշ չափով կարող են տարբերվել մեկ երկրից կամ ծրագրից մյուսը:

Միանվագ գումարներ

Յուրաքանչյուր մասնակից հաստատություն ծրագրային դրամաշնորհ է ստանում միանվագ գումարի տեսքով, որպես իր բոլոր ծրագրային ծախսերը՝ շարժունության ժամանակահատվածում ճանապարհի և կենսապահովման ծախսերը, ինչպես նաև տեղական ծրագրային գործողությունների հետ կապված ծախսերը հոգալու համար նախատեսված օժանդակություն: Դրամաշնորհները սահմանվում են ելնելով այն «շարժունությունների» նվազագույն քանակից, որ մասնակից հաստատությունը նախատեսում է իրականացնել համաձայնեցված ժամանակահատվածում: Մեկ «շարժունությունը» համապատասխանում է Գործընկերության շրջանակներում արտասահման մեկ անձի կողմից իրականացված ճանապարհորդությանը: Դրամաշնորհային համաձայնագիրը սահմանում է շարժունության թույլատրելի գործողությունների տեսակները: Վերջնական հաշվետվության փուլում շահառուներից չի պահանջվի ծախսերի վերաբերյալ ապացույցներ ներկայացնել, սակայն անհրաժեշտ կլինի ապացուցել, որ իրենց դիմումում նախատեսված գործողություններն իրականացվել են լիովին և պատշաճ ձևով:

Ծանոթություն.
Հատուկ կարիքավոր աշակերտների/ սովորողների կարիքները հաշվի առնելու համար, կամ եթե շարժունությունը նախատեսված է իրականացնել դեպի «Արտասահմանյան երկրներ և տարածքներ» (տես մաս 1.Գ. «Ո՞ր երկրներն են մասնակցում ծրագրին») ցանկում զետեղված տարածքներից որևէ մեկում գտնվող գործընկեր երկիր կամ այդ երկրից դեպի մեկ այլ երկիր, շարժունությունների նվազագույն քանակը կարելի է նվազեցնել մինչև 50%-ով: Օրինակ՝ այն հաստատությունը, որը նախատեսում է հատուկ կարիքավոր մասնակիցներով շարժունության գործողությունների հետ կապված լրացուցիչ խոշոր ծախսեր կատարել, կարող է խնդրել Ազգային գործակալությանը նվազեցնել պահանջվող դրամաշնորհային գումարների հետ կապված շարժունությունների նվազագույն թիվը: Եթե Ազգային գործակալությունն ընդունում է խնդրանքը, դրամաշնորհային գումարը նույնն է մնում, սակայն շարժունությունների պահանջվող նվազագույն քանակն ավելի քիչ կլինի:

Աղյուսակ 4. Կոմենիուս, Լեոնարդո դա Վինչի և Գրունդվիգ – Գործընկերությունների համար նախատեսված առավելագույն միանվագ գումարները
Ներքոհիշյալ աղյուսակը ցույց է տալիս յուրաքանչյուր Գործընկերության տեսակի համար առավելագույն դրամաշնորհային գումարները, որոնք կախված են նախատեսված շարժունությունների քանակից: Ազգային գործակալությունների կողմից տրամադրվող իրական գումարները տարբերվում են երկրից՝ երկիր և որոշ դեպքերում կարող են զգալիորեն ցածր լինել ներքոհիշյալ առավելագույն գումարներից: Դիմողներին խորհուրդ է տրվում հատկապես ուսումնասիրել իրենց երկրում գտնվող համապատասխան Ազգային գործակալության կայք էջը՝ ճշտելու համար այն իրական գումարները, որոնք հնարավոր է ձեռք բերել դիմումների հաջող ընթացքի դեպքում:

Գործընկերության տեսակը		**2 տարվա Գործընկերության** յուրաքանչյուր գործընկերոջ համար թույլատրելի շարժունությունների քանակը	Յուրաքանչյուր գործընկերոջ համար նախատեսված **առավելագույն** միանվագ գումարային դրամաշնորհը	Յուրաքանչյուր գործընկերոջ համար նախատեսված **առավելագույն** միանվագ գումարային դրամաշնորհը	Յուրաքանչյուր գործընկերոջ համար նախատեսված **առավելագույն** միանվագ գումարային դրամաշնորհը
			ԿՈՄԵՆԻՈՒՍ	ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ	ԳՐՈՒՆԴՎԻԳ
Բազմակողմ գործընկերություններ	**Սակավաթիվ** շարժունություններ	4	10.000 €	10.000 €	15.000 €
	Սահմանափակ քանակությամբ շարժունություններ	8	15.000 €	15.000 €	17.500 €
	Շարժունությունների **միջին** քանակ	12	20.000 €	20.000 €	20.000 €
	Մեծաքանակ շարժունություններ	24	25.000 €	25.000 €	25.000 €
Երկկողմ գործընկերություններ	**Կոմենիուս** երկկողմ գործընկերություններ – 10-19 աշակերտներից բաղկացած փոքր խմբերի փոխանակում	12	20.000 €	-	-
	Կոմենիուս երկկողմ գործընկերություններ – 20 և ավելի աշակերտներից բաղկացած մեծ խմբերի փոխանակում	24	25.000 €	-	-

Բացառություն. «Կոմենիուս Ռեգիո» դրամաշնորհներ. «Կոմենիուս Ռեգիո» դրամաշնորհները բաղկացած են շարժունությունների համար նախատեսված միանվագ գումարային ֆինանսավորումից, ինչպես նաև լրացուցիչ ծախսերի համար նախատեսված իրական արժեքների վրա հիմնված դրամաշնորհից: Շարժունության միանվագ գումարի մեջ չի մտնում լրացուցիչ ծախսերի համար նախատեսված օժանադակությունը, որը «Կոմենիուս Ռեգիո» գործընկերություններին հնարավորություն կտա իրականացնել տարբեր միջոցառումներ, ներառյալ՝ մեծամասշտաբ համաժողովների կամ գիտահետազոտական գործունեության և ուսումնասիրությունների կազմակերպումը: Ծրագրային լրացուցիչ ծախսերի համար նախատեսված գումարը սահմանափակվում է առավելագույնը 25.000 եվրո-ով:

Ներքոհիշյալ աղյուսակը ցույց է տալիս առավելագույն միանվագ գումարների չափը: Մասնակից երկրների պատասխանատուները կորոշեն յուրաքանչյուր երկրի համար իրական գումարը:

	Գործընկերությունների տեսակները		Երկար տարածություն (> 300 կմ)	Կարճ տարածություններ (< 300 կմ)
«Կոմենիուս Ռեգիո» գործընկերություններ	**Փոքրաքանակ** շարժունություններ	4	4.000 €	2.000 €
	Սահմանափակ թվով շարժունություններ	8	8.000 €	4.000 €
	Միջին թվով շարժունություններ	12	10.000 €	5.000 €
	Մեծաքանակ շարժունություններ	24	20.000 €	10.000 €

Դիմողներին խնդրվում է ներկայացնել բյուջե ցանկացած լրացուցիչ ծախսի համար, բացի շարժունության հետ կապված ծախսերից (որոնք արդեն մտնում են միանվագ գումարի մեջ): Այդ բյուջեի համար կիրառելի են 4.Զ. գլխում ներկայացված կանոնները (ծախսերի թույլատրելիությունը, սարքավորումների ծախսերը, ենթակապալառությունը և այլ ծախսեր): Ազգային գործակալությունները պետք է հաստատեն բյուջեի թույլատրելիությունը: «Կոմենիուս Ռեգիո»-ի շրջանակներում անձնակազմի հետ կապված ծախսերը թույլատրելի **չեն** համարվում:

4.Զ. ԲԱԶՄԱԿՈՂՄ ԾՐԱԳՐԵՐ, ՑԱՆՑԵՐ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ԴԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դրամաշնորհների համար դիմումները պետք է ներառեն մանրակրկիտ հաշվարկված բյուջե, որի մեջ բոլոր գները ներկայացված են եվրոյով: Եվրո զոնայից դուրս գտնվող երկրներից դիմողները պետք է կիրառեն առաջարկների համար հրավերքի հրապարակման օրը ԵՄ պաշտոնական ամսագրում, շարք Գ-ում տպագրված փոխարժեքները:
Դիմումի համար հաշվարկված բյուջեում հասույթն ու ծախսերը պետք է հավասարակշռված լինեն և հստակ ցույց տան այն ծախսերը, որոնք ԵՀ բյուջեից ֆինանսավորման ենթակա են:
Հատկացված դրամաշնորհը չի հոգա թույլատրելի ծախսերի 75%-ից ավելին:
Դիմողները պետք է ծրագրային բյուջեն կազմեն ելնելով հետևյալից.
1 անձնակազմի հետ կապված օրեկան ծախսեր. Ոչ մի դեպքում դրանք չեն կարող գերազանցել ներքոհիշյալ **Աղյուսակ 5**-ում ներկայացված առավելագույն դրույքաչափերը: Ցանկացած ավելցուկային գումար անթույլատրելի կհամարվի: Այդ ծախսերի վավերությունը կարող է աուդիտի ենթարկվել.
2 կենսապահովման իրական օրեկան դրույքաչափեր. Ոչ մի դեպքում դրանք չեն կարող գերազանցել Գործադիր գործակալության կայք էջում հրապարակված առավելագույն դրույքաչափերը: Ցանկացած ավելցուկ անթույլատրելի է.
3 այլ իրական ծախսեր, ինչպես դիմումաձևում նշված է:

Թույլատրելի ծախսեր

Թույլատրելիությունը որոշելիս հաշվի կառնվեն ընդհանուր համատեքստը, ծախսերի բնույթն ու քանակը:

Հետևյալ չափանիշները կիրառելի են **գնահատվող ծախսերի** կամ դրանց հետ կապված **միավորների քանակի** հաշվարկման համար:
Թույլատրելի համարվելու համար ծախսերը պետք է համապասխանեն հետևյալ ընդհանուր չափանիշներին.

- Դրանք պետք է կապված լինեն այն գործողությունների հետ, որոնց մեջ ներգրավված են ծրագրին մասնակցելու իրավունք ունեցող **երկրներ:** Այդ երկրներից դուրս կամ թույլատրելի երկրում չգրանցված կազմակերպությունների կողմից նախաձեռնված միջոցառումների հետ կապված ծախսերը թույլատրելի չեն, բացի այն դեպքերից, երբ դրանք անհրաժեշտ են ծրագրի իրականացման համար և պատշաճ ձևով բացատրված ու արդարացված են դիմումաձևում և/ կամ հաշվետվության մեջ.
- պետք է կատարվեն պաշտոնական միավորման **իրավաբանական մարմինների/ հաստատությունների կողմից**[18] **.**
- պետք է **կապված** լինեն ծրագրի հետ (այսինքն՝ համապատասխանեն և աշխատանքային ծրագրի համաձայն անմիջականորեն կապված լինեն ծրագրի իրականացման հետ).
- պետք է **անհրաժեշտ** լինեն ծրագրի կատարման համար.
- պետք է **տեղին ու հիմնավորված** լինեն և համապատասխանեն **սահուն ֆինանսական կառավարման** սկզբունքներին[19], հատկապես փողի արժեվորման և ծախսարդյունավետության տեսանկյունից.
- պետք է **առաջանան** ծրագրի իրականացման ընթացքում[20].
- պետք է **իրականում կատարվեն** շահառուի ու միավորման անդամների կողմից և գրանցված լինեն իրենց հաշիվների մեջ՝ հաշվապահական կիրառելի սկզբունքների համաձայն, ինչպես նաև հայտարարվեն՝ կիրառելի հարկային ու հասարակական օրենսդրության պահանջների համաձայն.
- պետք է լինեն **ճանաչվող և ստուգվող**:

Դիմողի ներքին հաշվապահական և աուդիտի ընթացակարգերը պետք է ապահովեն ծրագրի վերջում հայտարարված ծախսերի ու եկամուտների և համապատասխան հաշվապահական հաշվետվությունների ու լրացուցիչ փաստաթղթերի ուղղակի համապատասխանություն: Միավոր ծախսերի սանդղակների համար դա նշանակում է, որ «միավորների թիվը» պետք է արձանագրված լինի համապատասխան փաստաթղթերում (այսինքն՝ ժամանակացույցեր, ներկայության ցուցակներ և այլն):

Այնտեղ, որտեղ ազգային հարկային ու հաշվապահական կանոնները հաշիվ - ապրանքագիր չեն պահանջում, համարժեք հաշվապահական փաստաթուղթ կարող է համարվել ցանկացած փաստաթուղթ, որ կարող է ապացուցել, որ հաշվապահական մուտքը ճշգրիտ է և համապատասխանում է գոյություն ունեցող հաշվապահական օրենքին:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

ԱԱՀ – ն ընդունելի է **միայն,** եթե դիմողը կարող է ապացուցել, որ ի վիճակի չէ փոխհատուցել այն:

ՈՉ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԾԱԽՍԵՐ

Ոչ մի դեպքում հետևյալ տեսակի ծախսերը թույլատրելի չեն կարող համարվել:

[18] Ցկյանս կրթության ծրագիրը ստեղծող Որոշումը «ծրագրի համակարգող» և «ծրագրի գործընկերներ» ունեցող ծրագրերի համար սահմանում է «բազմակողմ խումբ» եզրույթը, որը «միավորման» համարժեքն է: [19] Ծախսերը կսահմանվեն սահուն ֆինանսական կառավարման, հատկապես տնտեսելու, արդյունավետության ու արդյունավորության սկզբունքների համաձայն: Տնտեսելու սկզբունքը պահանջում է, որպեսզի ծախսերը սահմանվեն ժամանակին, ճիշտ քանակությամբ, որակով ու լավագույն գնով: Արդյունավորության սկզբունքը ենթադրում է ներառված ռեսուրսների ու ձեռք բերված արդյունքների լավագույն հարաբերություն: Արդյունավետության սկզբունքը ենթադրում է սահմանված կոնկրետ հիմնախնդիրների լուծումն ու ծրագրված արդյունքների նվաճումը: [20] Այսինքն՝ ծախսերը պետք է առաջանան ծրագրի իրականացման (տևողության) ընթացքում տեղի ունեցող գործողության հետ կապված: Դրամաշնորհային համաձայնագրում նշված ժամանակահատվածից առաջ կամ հետո իրականացվող գործողությունները ֆինանսավորման ենթակա չեն:

- սեփական կապիտալին ավելացող եկամուտ,
- պարտքեր ու պարտքերի տրամադրման հետ կապված վճարումները,
- կորուստների կամ ապագայում հնարավոր պարտավորությունները (պայմանագրային ու բարոյական պարտավորությունների, տուգանքների, ֆինանսական տույժերի ու իրավաբանական ծախսերի վերաբերյալ դրույթները),
- պարտքերի տոկոսները,
- կասկածելի պարտքերը,
- փոխանակման պատճառով առաջացած կորուստները,
- ԱԱՀ, **մինչև** դիմողը չապացուցի, որ ի վիճակի չէ դա վճարել,
- այն ծախսերը, որոնց մասին հայտարարվել է դիմողի կողմից և փոխհատուցվել են Եվրոպական Միության դրամաշնորհ ստացող մեկ այլ գործողության կամ աշխատանքային ծրագրի կամ ֆինանսավորման աղբյուրի կողմից,
- ավելորդ կամ չմտածված ծախսերը,
- հիմնական միջոցների ձեռք բերումը,
- սարքավորման վարձակալման դեպքում, վարձակալման ժամանակահատվածի վերջում փրկագնով ազատված ցանկացած տարբերակի արժեքը,
- Ցկյանս կրթության ծրագրի համար դիմումը պատրաստման հետ կապված ծախսերը,
  բանկային հաշիվների բացման կամ սպասարկման հետ կապված ծախսերը (գումարների փոխանցման ածժեքները թույլատրելի են),
- դիմումի հետ պահանջվող ցանկացած փաստաթղթի հետ կապված ծախսերը (աուդիտորական հաշվետվությունները և այլն):

ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՈՒՂՂԱԿԻ ԾԱԽՍԵՐ

Գործողության հետ կապված թույլատրելի ուղղակի ծախսերը համապատասխանում են թույլատրելիության վերաբերյալ վերոհիշյալ պայմաններին և համարվում են առանձնահատուկ ծախսեր, որոնք անմիջականորեն կապված են գործողության իրականացման հետ: Սույն փաստաթղթում կան մի շարք ծախսերի տեսակների սահմանումներ, որոնք թույլատրելի են համարվում, եթե համապատասխանում են վերոհիշյալ թույլատրելիության ընդհանուր չափանիշներին:

ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԾԱԽՍԵՐ

Թույլատրելի անուղղակի ծախսերը, թույլատրելիության վերաբերյալ վերոհիշյալ պայմանների համաձայն, չեն համարվում առանձնահատուկ ծախսեր, որոնք անմիջականորեն կապված են ծրագրի հետ, սակայն կատարվել են ծրագրի կառավարման ժամանակ: Դրանց մեջ կարող են չլինել թույլատրելի ուղղակի ծախսեր:
ԵՀ ֆինանսավորման ենթակա անուղղակի ծախսերը կայուն փոխարժեքով գումարներն են, որոնք կազմում են թույլատրելի ուղղակի բոլոր ծախսերի առավելագույնը 7%: Համապատասխան ծախսերը պետք է ապացուցվեն հաշվապահական փաստաթղթերի միջոցով:
Անուղղակի ծախսերը թույլատրելի չեն համարվի ծրագրային դրամաշնորհի ներքո, եթե այն տրամադրվում է շահառու կազմակերպությանը, որն արդեն տվյալ ժամանակահատվածում ստանում է գործող դրմաշնորհ Հանձնաժողովի կողմից:
Անուղղակի ծախսերի օրինակներ են՝

- ծրագրի կառավարման հետ կապված սարքավորումների համար ծախսերը (օրինակ՝ համակարգիչներ, դյուրակիրներ և այլն).
- հաղորդակցման հետ կապված ծախսերը (փոստային ծառայություն, ֆաքս, հեռախոս, էլեկտրոնային փոստ և այլն).
- այն շենքի ենթակառուցվածքային ծախսեր (վարձակալում, էլեկտրականություն և այլն), որտեղ իրականացվում է ծրագիրը.
- գրասենյակային ռեսուրսներ.
- պատճենահանում:

Անձնակազմի ծախսերը

Հետևյալ կետերը վերաբերում են միավորման բոլոր գործընկերներին, օրինակ՝ միավորման բոլոր գործընկերներին (ներառյալ՝ դիմողին) են վերաբերում անձնակազմի ծախսերի վերաբերյալ կանոնները:

1) Հաշվի են առնվում անձնակազմի հետևյալ խմբերի հետ կապված ծախսերը.

- Օրինական անձնակազմը, որը միավորման գործընկերոջ հետ ունի մշտական կամ ժամանակավոր անհատական պայմանագիր: Այդ խմբում ընդգրկվելու համար անձնակազմը պետք է հաշվետվություն ներկայացնի համապատասխան գործընկեր կազմակերպությանը որպես աշխատող,

- ժամանակավոր անձնակազմը, որն աշխատանքի է ընդունվել միավորման որևէ գործընկերոջ կողմից, մասնագիտացված արտաքին գործակալության միջոցով:

Ենթակապալառությամբ աշխատող անձնակազմի հետ կապված ծախսերը կներառվեն «Ենթակապալառության ծախսեր» (տես ներքևում) խմբի մեջ: Ծրագրային գործընկերների անձնակազմի անդամներին թույլ չի տրվում աշխատել ծրագրի համար ենթակապալառության իրավասությամբ:

2) Դիմողները պետք է ծրագրի բյուջեն կազմեն անձնակազմի իրական օրեկան ծախսերի հիման վրա, որոնք չեն կարող գերազանցել **Աղյուսակ 5-ում** ներկայացված առավելագույն դրույքաչափը: Ցանկացած ավելցուկ անթույլատրելի կհամարվի: Այդ ծախսերի վավերությունը կարող է աուդիտի ենթարկվել:
3) Կկիրառվի այն երկրի դրույքաչափը, որտեղ գրանցված է գործընկեր կազմակերպությունը՝ անկախ այն հանգամանքից, որտեղ են իրականացվելու առաջադրանքները (այսինքն՝ Ա երկրի կազմակերպության աշխատողը, որը լրիվ կամ մասնակի զբաղվածությամբ աշխատում է Բ երկրում, կվարձատրվի Ա երկրի դրույքաչափով):
4) Անձնակազմի օրեկան իրական դրույքաչափերը հիմնված են միջին դրույքաչափերի վրա, որոնք համապատասխանում են վարձատրության, իրական աշխատավարձերի փոխզիջման, սոցիալական ապահովության վճարների կամ վարձատրության մեջ մտնող այլ օրինական ծախսերի վերաբերյալ դիմողի երկրում գործող սովորական քաղաքականությանը: Օրենքով չնախատեսված ծախսերը, ինչպիսիք են՝ հավելավճարներ, վարձակալված մեքենա, ծախսերի համար նախատեսված հաշիվների սխեմաները, խրախուսական վճարներ կամ շահույթը կիսելու սխեմաները բացառվում են:
5) Դիմողը կորոշի անձնակազմի խումբը և այն օրերի քանակը, որ նրանք պետք է աշխատեն ծրագրի համար՝ ելնելով ծրագրի բնույթից և աշխատանքային պլանից:

Անձնակազմի ծախսերը կարող են ներառվել բոլոր տեսակի ծրագրերի ու ցանցերի համար: Շահառուի կամ միավորման գործընկերների կողմից գործողության իրականացման համար նշանակված անձնակազմի հետ կապված ծախսերի մեջ են մտնում իրական աշխատավարձերը, սոցիալական ապահովության վճարները և փոխհատուցման մեջ մտնող այլ օրինական վճարները:

6) Անձնակազմի ծախսերը հաշվարկվում են օրերի քանակը անձնակազմի համար նախատեսված օրեկան իրական դրույքաչափով բազմապատկելու միջոցով:

Անձնակազմի համար թույլատրելի ծախսերը հաշվարկվում են **թույլատրելի միավոր ծախսերի** սանդղակների հիման վրա: Ներքոհիշյալ **Աղյուսակ 5-ում** ներկայացված են **յուրաքանչյուր թույլատրելի երկրի համար սահմանված թույլատրելի օրեկան դրույքաչափերը:** Արդյունքում ստացված գումարները պետք է ներառվեն բյուջեի մեջ և հաշվի առնվեն Եվրոպական համայնքի օժանդակությունը հաշվարկելիս:

Աղյուսակ 5. Անձնակազմի ծախսերի համար օրեկան թույլատրելի առավելագույն դրույքաչափերը (եվրոյով) – Բազմակողմ ծրագրեր, ցանցեր, լրացուցիչ միջոցառումներ, ուսումնասիրություններ և համեմատական հետազոտություն

Երկիր			Կառավարիչ	Հետազոտող Ուսուցիչների վերապատրաստող	Տեխնիկական	Վարչական
Belgique/Belgie	BE	Բելգիա	376	321	260	203
Balgarija	BG	Բուլղարիա	79	71	55	37
Českn republika	CZ	Չեխիայի Հանրապետություն	144	144	104	75
Danemark	DK	Դանիա	489	419	341	267
Deutschland	DE	Գերմանիա	363	315	253	195
Eesti	EE	Էստոնիա	117	107	75	53
Ellas	EL	Հունաստան	267	228	187	145
Espaŋa	ES	Իսպանիա	295	265	204	143
France	FR	Ֆրանսիա	424	359	235	179
Eire	IE	Իռլանդիա	479	417	348	255
Italia	IT	Իտալիա	568	332	225	187
Kypros	CY	Կիպրոս	304	267	165	113
Latvija	LV	Լատվիա	131	107	85	57
Lietuva	LT	Լիտվա	103	88	67	47
Luxembourg	LU	Լյուքսեմբուրգ	493	423	343	267
Magyarorszng	HU	Հունգարիա	141	123	93	53
Malta	MT	Մալթա	129	117	91	65
Nederland	NL	Նիդերլանդներ	381	333	264	207
ßsterreich	AT	Ավստրիա	419	323	240	199
Polska	PL	Լեհաստան	161	133	103	75
Portugal	PT	Պորտուգալիա	183	161	119	79
Romania	RO	Ռումինիա	155	119	93	59
Slovenia	SI	Սլովենիա	252	227	183	115
Slovenskn republika	SK	Սլովակիա	133	119	95	77
Suomi/Finland	FI	Ֆինլանդիա	361	259	213	179
Sverige	SE	Շվեդիա	505	432	355	273
United Kingdom	GB	Միացյալ Թագավորություն	469	443	311	224
Island	IS	Իսլանդիա	435	396	341	219
Liechtenstein	LI	Լիխթենշթայն	395	324	251	199
Norge	NO	Նորվեգիա	553	480	392	296
TŶrkiye	TR	Թուրքիա	193	123	81	52

Կենսապահովման ծախսեր

(1) Թույլատրելի են բազմակողմ ծրագրերի, ցանցեր, լրացուցիչ միջոցառումների և համեմատական հետազոտության շրջանակներում մեկ այլ մասնակից երկիր մեկնող անձնակազմի կենսապահովման ծախսերը: Բյուջեն պետք է հիմնվի Գործադիր գործակալության կայք էջում հրապարակված կենսապահովման ծախսերի աղյուսակում ներկայացված առավելագույն դրույքաչափի վրա: Ցանկացած ավելցուկ անթույլատրելի կհամարվի: Կիրառելի դրույքաչափը հյուրընկալող երկրում ընդունված դրույքաչափն է. այսինքն՝ այնտեղ, որտեղ կատարվում են կացարանի հետ կապված ծախսերը:

(2) Ծախսերի փոխհատուցում կարելի է պահանջել միայն ծրագրի հետ անմիջականորեն առնչվող կոնկրետ և հստակ գործողությունների հետ կապված ճանապարհորդությունների համար: Անձնակազմի անդամ չհանդիսացող անձանց կենսապահովման ծախսերի գանձնման վերաբերյալ տեղեկատվություն կարելի է գտնել «Այլ ծախսեր» և «Ենթակապալառության ծախսեր» մասում:

(3) Փոխհատուցումը հիմնված է Գործընկեր կազմակերպություններում գոյություն ունեցող ներքին կանոնների վրա, որոնք կարող են հիմնվել իրական ծախսերի (փոխհատուցման անդորրագրեր) կամ օրապահիկների վրա: Ցանկացած դեպքում կպանաջվի հաճախումների և կացարանում բնակվելու վերաբերյալ ապացույց՝ հաշվետու փուլում հայտարարված ծախսերը հոգալու համար:
(4) Կենսապահովման դրույքաչափերի մեջ են մտնում արտասահմանում կացարանի, սննդի և տեղական տրանսպորտի ծախսերը (բայց չեն մտնում սեփական երկրից հյուրընկալող երկիր հասնելու համար անհրաժեշտ ճանապարհածախսը): Օրերի քանակը հաշվելիս, որոնց նկատմամբ պետք է կիրառվի կենսապահովման օրեկան դրույքաչափը, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ԼՐԻՎ օրը սովորաբար ենթադրում է գիշերել: Պատշաճ ձևով հիմնավորված դեպքերում առանց գիշերելու լրիվ օրապահիկը թույլատրելի կարող է համարվել կացարանի համար ծախսերի համամասնորեն նվազեցումով (ծախսեր, որոնք սահմանափակված են առավելագույնի 50%-ով):
(5) Համամասնորեն նվազեցումը պետք է կիրառվի, եթե կացարանի, սննդի ու տեղական տրանսպորտի ծախսերը ապահովում է երրորդ կողմը:

Կենսապահովման թույլատրելի ծախսերը հաշվարկվում են թույլատրելի միավոր ծախսերի սանդղակների հիման վրա: Գործադիր գործակալության կայք էջում հրապարակված Կենսապահովման աղյուսակը ներառում է թույլատրելի առավելագույն օրեկան դրույքաչափերը: Արդյունքում ստացված գումարները կներառվեն բյուջեի մեջ և հաշվի կառնվեն Եվրոպական Միության օժանդակությունը հաշվելիս:

Նորարական ծրագրի փոխանցման դեպքում, տեղեկատվություն կարելի է ստանալ Ազգային գործակալությունների կայք էջերից:

Ճանապարհածախսեր

Ճանապարհածախսերը հատուցվում են իրական ծախսերի հիման վրա:
(1) Ծրագրին մասնակցող անձնակազմի ճանապարհածախսերը թույլատրելի են, եթե դրանք չեն հակասում ճանապարհածախսերի հետ կապված յուրաքանչյուր գործընկերոջ ունեցած սովորական փորձին:
(2) Ծախսերի փոխհատուցում կարելի է պահանջել միայն ծրագրի հետ անմիջականորեն առնչվող **կոնկրետ** և **հստակ** գործողությունների հետ կապված ճանապարհորդությունների համար: Անձնակազմի անդամ չհանդիսացող անձանց ճանապարհածախսերի վերաբերյալ տեղեկատվություն կարելի է գտնել «Այլ ծախսեր» և «Ենթակապալառության ծախսեր» մասում:
(3) Փոխհատուցումը հիմնված է իրական ծախսերի վրա, անկախ ընտրված տրանսպորտային միջոցից (երկաթուղի, ավտոբուս, տաքսի, ինքնաթիռ, վարձու մեքենա): Պահանջվում է, որպեսզի գործընկերներն օգտագործեն տրանսպորտի ամենաէժան միջոցը (օրինակ՝ օգտագործեն ինքնաթիռի «Apex» տոմսեր և օգտվեն իջեցված գներից: Իսկ եթե դա հնարավոր չէ, ապա անհրաժեշտ կլինի ներկայացնել լիարժեք բացատրություն):
(4) Ճանապարհածախսը պետք է ներառի բոլոր ծախսերն ու տրանսպորտային միջոցները՝ սկսած մեկնելու վայրից մինչև նպատակակետը (և հակառակը), ինչպես նաև վիզայի ծախսերը, ճանապարհային ապահովագրության և չեղյալ հայտարարելու հետ կապված ծախսերը:
(5) Անձնական մեքենայով (անձնական կամ ընկերության մեքենաներ) ճանապարհորդելու հետ կապված ծախսերը, եթե դրանք հիմնավորված են և եթե արժեքը չափազանց բարձր չէ, կփոխհատուցվեն հետյալ կարգով (որն է ամենաէժանը).

- Տվյալ կազմակերպության ներքին կանոնների համաձայն, յուրաքանչյուր կմ-ի համար դրույքաչափ՝ մինչև առավելագույնը 0.22 եվրո,
- կամ գնացքի, ավտոբուսի կամ ինքնաթիռի տոմսի արժեքը (տես կետ (3) վերևում): Կփոխհատուցվի միայն մեկ տոմսի արժեքը, անկախ միևնույն տրանսպորտային միջոցով ճանապարհորդողների թվից:

(6) Վարձու մեքենաների (առավելագույնը Բ կարգի կամ համարժեք) կամ տաքսիների համար՝ իրական արժեքը, եթե այն չի գերազանցում տրանսպորտային մյուս միջոցների արժեքը (նաև հաշվի առնելով ցանկացած ազդող հանգամանք, ինչպիսիք են ժամանակը, ծրագրի բնույթից կախված մեծաքանակ ուղեբեռը): Փոխհատուցում կտրամադրվի՝ անկախ միևնույն տրանսպորտային միջոցով ճանապարհորդողների թվից:

«Կոմենիուս» բազմակողմ ծրագրերի համար, որոնք ներառում են շարժունության գործողություններ Ուսուցիչների նախնական վերապատրաստումների ժամանակ, ճանապարհածախսերը (որոնք հիմնված են իրական արժեքների վրա) և կենսապահովման ծախսերը կարձանագրվեն առանձին, «Այլ ծախսերի» ներքո: Կիրառվում են կանոններ ճանապարհածախսի և կենսապահովման ծախսերի համար:

Սարքավորումների հետ կապված ծախսեր

(1) Սարքավորումների գնումը կամ վարձակալումը (նոր կամ օգտագործված), ներառյալ՝ տեղադրման, պահպանման ու ապահովագրության ծախսերը, թույլատրելի է համարվում,

• միայն եթե դրանք անհրաժեշտ են ծրագրի/ գործողության նպատակների իրականացման համար: Սարքավորումների հետ կապված առաջարկված ծախսերը պետք է միշտ հստակ բացատրվեն ու արդարացվեն: Կիրառվում են գնման կանոնները (տես ներքևում),

• եթե արժեքը նվազեցվել է հարկային ու հաշվապահական կանոնների համաձայն, որոնք կիրառվում են ծախսերը հոգացող շահառուի / միավորման գործընկերոջ նկատմամբ և սովորաբար բնորոշ է նույն տեսակի իրերին: Միայն գործողության իրականացման ժամանակահատվածում սարքավորման արժեքի նվազման մասը և գործողության նպատակներով իրական կիրառման դրույքաչափը կարող են հաշվի առնվել: Դիմողը պետք է բացատրի կիրառված կանոնները: Եթե բնույթը և/ կամ օգտագործման համատեքստը պահանջում են մեկ այլ մոտեցում, ապա դա պետք է պատշաճորեն արդարացվի:

(2) Ծրագրի կառավարման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները (օրինակ՝ համակարգիչներ, դյուրակիրներ և այլն) և մինչև ծրագրի մեկնարկը գնված բոլոր սարքավորումները կարող են համարվել միայն ծրագրի անուղղակի ծախսեր:

(3) սարքավորումների ընդհանուր արժեքը չի կարող գերազանցել ծրագրի թույլատրելի ուղղակի ծախսերի 10%-ը:

Ենթակապալառության ծախսեր

(1) <u>Գնման պայմանագրերով</u> ծրագրի առանձնահատուկ ու սահմանափակ աշխատանքների իրականացման համար նախատեսված ծախսերը կարող են թույլատրելի համարվել, եթե դրանք կապված են գործընկերոջ կողմից արտաքին մարմնին, կազմակերպությանը կամ անհատին (միայն եթե աշխատանքի են ընդունվել միավորման ցանկացած գործընկեր կազմակերպության կողմից) հանձնարարված աշխատանքի հետ: Այդ աշխատանքների թվում են գրավոր և բանավոր թարգմանությունները, տպելը և այլն:[21] [22]

(2) Ծրագրային գործընկերության հայեցակարգը պահպանելու համար, ծրագրի կառավարումն ու ընդհանուր վերահսկումը կարող են ենթակապալառության ենթակա չլինել:

(3) Ծախսերը հիմնված են ապացուցելի հաշվարկների վրա կամ, եթե հայտնի է ենթակապալառուն, առաջարկի վրա: Հաշվարկի/ առաջարկի մեջ են մտնում բոլոր ծախսերը (այսինքն՝ անձնակազմի ծախսերը, ինչպես նաև ճանապարհածախսը և այլն):

(4) Դիմողը պայմանագիրը կվստահի այն հայտին, որը կներկայացնի լավագույն առաջարկը փողի դիմաց, այսինքն՝ կառաջարկի լավագույն ծախս - շահույթ հարաբերությունը՝ թափանցիկության և հնարավոր կապալառուների նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովման, ծախերի բախումից խուսափելու սկզբունքների համաձայն:

[21] Սա վերաբերում է այն անհատներին, որոնք կարող են ունենալ սեփական գործը, այսինքն՝ նրանք, ովքեր իրենք են պատասխանատու սեփական սոցիալական հավասարության կամ հասարակական ներդրումների, թոշակների ու հարկերի համար: Այդ անհատներին բնորոշող ազգային օրենսդրությունները կարող են տարբեր լինել և միշտ պետք է հաշվի առնվեն:

[22] Ներառում է նաև այն խորհրդատուների փոխհատուցումը, ովքեր մատուցում են միանգամյա վարձատրվող ծառայություն:

(5) Կիրառվում են գնումների վերաբերյալ Եվրոպական Միության հետևյալ առանձնահատուկ կանոնները.

- 12.500 եվրոյից ցածր արժողությամբ պայմանագրերը կարող են վճարվել հաշիվ - ապրանքագրի առկայության դեպքում,
- 12.500 եվրոյից 25.000 եվրո արժողությամբ պայմանագրերի նկատմամբ կիրառվում է առնվազը երեք մրցառքի հայտատու ներառող ընթացակարգ,
- 25.000 եվրոյից 60.000 եվրո արժողությամբ պայմանագրերի նկատմամբ կիրառվում է առնվազը հինգ մրցառքի հայտատու ներառող ընթացակարգ
- 60.000 եվրոյից ավել արժողությամբ պայմանագրերի նկատմամբ կիրառվում են գնման վերաբերյալ ազգային կանոնները:

(6) Ենթակապալառության ընդհանուր ծախսերը ծրագրի ընդհանուր ուղղակի ծախսերի 30 %-ից ավել չեն կարող կազմել:

Այլ ծախսեր

Այլ ծախսերը փոխհատուցվում են իրական ծախսերի հիման վրա:

(1) Ծախսեր, որոնք ուղղակիորեն առաջանում են.

- Դրամաշնորհային պայմանագրի կողմից պարտադրված պահանջների հետևանքով, թույլատրելի են (տեղեկատվության տարածում, գործողության առանձնահատուկ գնահատում, աուդիտներպատճենում, թարգմանություն և այլն), ներառյալ ցանկացած ֆինանսական ծառայության հետ կապված ծախսերը (հատկապես ֆինանսական երաշխավորությունների հետ կապված ծախսերը),
- առանձնահատուկ գործողությունների կամ ծրագրի արդյունքների իրականացման հետևանքով, թույլատրելի են (օրինակ՝ սեմինարների կազմակերպումն այնտեղ, որտեղ սեմինարը դիտարկվում է որպես ծրագրի արդյունք և որտեղ առաջադրանքի հետ կապված ծախսերը հեշտությամբ որոշվում են), սեմինարի վարույթը, տեսանյութի ստեղծումը, արդյունքի հետ կապված սպառման առարկաների գնում (նյութերը տպելու համար թուղթ, դատարկ DVD-ներ) և այլն:

(2) Թույլատրելի են համարվում միայն այն գործողությունները, որոնք առանձնահատուկ են և անհրաժեշտ ծրագրի նպատակների իրականացման համար: Առաջարկված ծախսերը պետք է միշտ պատշաճորեն ապացուցվեն:

(3) Եթե փոխհատուցվում են երրորդ կողմի (այսինքն՝ այն մարդկանց ծախսերը, ովքեր չեն հանդիսանում միավորման մեջ գտնվող գործընկերների անձնակազմի անդամ կամ ենթակապալառու) ճանապարհածախսը և/կամ կենսապահովման ծախսերը, կիրառվում են միավորման մեջ գտնվող գործընկերների անձնակազմի ծախսերի փոխհատուցման համար կիրառելի կանոնները:

(4) Այն բոլոր ծախսերը, որոնք կապված են ենթակապալառության հետ, պետք է նշվեն «ենթակապալառության» տակ: «Այլ ծախսերի» մեջ կարող են մտնել հենց իրենց՝ գործընկերների կողմից կատարված ծախսերը:

(5) Որոշակի դեպքերում այլ ծախսերը, որոնք չեն մտնում վերոհիշյալ «այլ ծախսեր» խմբի մեջ, նույնպես կարող են թույլատրելի համարվել: Այդպիսի օրինակներ են՝ մամլո հաղորդագրությունների ու գովազդի համար միանգամյա ծախսերը, հեղինակային իրավունքի և այլ մտավոր սեփականության այլ իրավունքների գնումը, տեղակտվական նյութերի գնումը (գրքեր, ուսումնասիրություններ և էլեկտրոնային տվյալներ), համաժողովների հետ կապված ծախսեր, համաժողովների գրացման հետ կապված ծախսեր, ցուցադրման տեղի վարձակալություն և այլն: «Կոմենիուս» բազմակողմ ծրագրերի համար, որոնք ներառում են շարժունության գործողություններ ուսուցիչների նախնական վերապատրաստման ժամանակ, ճանապարհածախսերն ու կենսապահովման ծախսերը մտնում են այդ խմբի մեջ:

Ծրագրի կառավարման հետ կապված բոլոր ծախսերը (այսինքն՝ սպառման առարկաներ, պատճենահանման, հեռախոսային ծախսեր, թուղթ և այլն.) մտնում են ծրագրի անուղղակի ծախսերի մեջ:

4.է. ԺԱՆ ՄՈՆԵ ԾՐԱԳԻՐ

Դրամաշնորհային դիմումները պետք է ունենան մանրամասն հաշվարկիված բյուջե, որտեղ բոլոր արժեքները ներկայացված են եվրոյով: Եվրո տարածքից դուրս գտնվող երկրներից դիմողները պետք է կիրառեն Առաջարկներ համար հրավերքի հայտարարության տպագրման օրը ԵՄ պաշտոնական ամսագրի Գ շարքում տպագրած փոխարժեքային դրույքաչափերը:

Դիմումի մեջ արծարծված գործողության համար հաշվարկված բյուջեն պետք է եկամտի և ծախսերի միջև հավասարակշռություն ապահովի, ինչպես նաև հստակորեն ցույց տա այն ծախսերը, որոնք ԵՀ բյուջեի կողմից ֆինանսավորման ենթակա են: Դիմողը պետք է նշի նույն ֆինանսական տարում նույն կամ մեկ ուրիշ գործողության և առօրյա գործունեության իրականացման համար ԵՀ ֆինանսավորումից բացի ստացած կամ դիմած ֆինանսական այլ աղբյուրների կամ գումարների մասին:

Հաշվարկված բյուջեի եկամուտների մասում նշված սեփական ռեսուրսների տոկոսադրույքը համարվում է երաշխավորված այն նվազագույնը, որը պետք է հաշվի առնվի վերջնական հաշվարկներում: Հատկացված դրամաշնորհը չի ծածկի թույլատրելի ծախսերի 75%-ից ավելին:

Դիմողները ծրագրի բյուջեն կազմելիս՝ հաշվի կառնվեն.

- անձնակազմի հետ կապված օրեկան ծախսեր. Ոչ մի դեպքում դրանք չեն կարող գերազանցել ներքոհիշյալ **Աղյուսակ 5**-ում ներկայացված առավելագույն դրույքաչափերը: Ցանկացած ավելցուկային գումար անթույլատրելի կհամարվի: Այդ ծախսերի վավերությունը կարող է աուդիտի ենթարկվել.
- կենսապահովման իրական օրեկան դրույքաչափեր. Ոչ մի դեպքում դրանք չեն կարող գերազանցել վերոհիշյալ Աղյուսակ 1ա-ում նշված առավելագույն դրույքաչափերը: Ցանկացած ավելցուկ անթույլատրելի է.
- այլ իրական ծախսեր, ինչպես դիմումաձևում նշված է:

«Ժան Մոնե» ծրագրերի անձնակազմի և կենսապահովման ծախսերի ներքո ներկայացված գումարները պետք է հիմնավորվեն դիմողի կողմից: Եթե այդ ծախսերը գերազանցում են Գործադիր գործակալության «Ժան Մոնե» էջերում նշված առավելագույն դրույքաչափերը, ավելցուկն անթույլատրելի կհամարվի:

Անձնակազմի ծախսեր

Անձնակազմի ծախսերը ներկայացվում են բոլոր տեսակի ծրագրերում:
Գործողության իրականացման համար շահառուի կամ համաշահառուների կողմից ընտրված անձնակազմի ծախսերի մեջ մտնում են իրական աշխատավարձերը, ինչպես նաև սոցիալական ապահովության ու աշխատավարձի մեջ մտնող այլ օրինական վճարները:
Անձնակազմի ծախսերը պետք է հիմնավորվեն դիմողի կողմից: Եթե այդ ծախսերը գերազանցում են Գործադիր գործակալության էջերում նշված առավելագույն դրույքաչափերը, ավելցուկն անթույլատրեի կհամարվի:
Կիրառվում են նույն չափանիշները, ինչ բազմակողմ ծրագրերի, ցանցերի, լրացուցիչ միջոցառումների, ուսումնասիրությունների ու համեմատական հետազոտության նկատմամբ:

Լրացուցիչ չափանիշներ «Ժան Մոնե» ծրագրերի անձնակազմի ծախսերի համար
Դիմողները, ծրագրային բյուջեն կազմելիս, պետք է հաշվի առնեն անձնակազմի իրական օրեկան ծախսերի դրույքաչափերը, որոնք նշված են Գործադիր գործակալության կայքի «Ժան Մոնե» էջերում:.
Անձնակազմի ծախսերը չպետք է գերազանցեն տվյալ երկրում անձնակազմի յուրաքանչյուր կարգի համար սահմանված սովորական դրույքաչափերը:

Անձնակազմի ծախսերը պետք է դասակարգվեն Մասնագիտությունների միջազգային ստանդարտ դասակարգման (ISCO) 1 - 4 կարգերի: Ցանկացած դեպքում կիրառվում են հետևյալ առավելագույն գումարները.
- 1 կարգի անձնակազմ (առավելագույն գումարը՝ օրեկան 450 եվրո)
- 2 կարգի անձնակազմ (առավելագույն գումարը՝ օրեկան 300 եվրո) – համալսարանի դասախոսներ
- 3 կարգի անձնակազմ (առավելագույն գումարը՝ օրեկան 250 եվրո)
- 4 կարգի անձնակազմ (առավելագույն գումարը՝ օրեկան 125 եվրո)
-

Կենսապահովման ծախսեր

Բոլոր տեսակի ծրագրերում առանձնացվում են կենսապահովման ծախսեր: Այդ գործողությունները կառավարվում են Գործադիր գործակալության կողմից:
Կենսապահովման ծախսերը պետք է հիմնավորվեն դիմողի կողմից: Եթե այդ ծախսերը գերազանցում են Գործադիր գործակալության կայքի «Ժան Մոնե» էջերում նշված առավելագույն դրույքաչափերը, ավելցուկն անթույլատրելի կհամարվի: Կիրառվում են նույն չափանիշները, ինչ բազմակողմ ծրագրերի, ցանցերի, լրացուցիչ միջոցառումների, ուսումնասիրությունների ու համեմատական հետազոտությունների նկատմամբ:
Լրացուցիչ չափանիշներ «Ժան Մոնե» ծրագրերի կենսապահովման ծախսերի համար

Բյուջեն պետք է կազմվի՝ ելնելով Գործադիր գործակալության կայքի «Ժան Մոնե» էջերում նշված առավելագույն դրույքաչափերը:

Ճանապարհածախսերը

Ճանապարհածախսերը փոխհատուցվում են՝ ելնելով իրական ծախսերից: Կիրառվում են նույն չափանիշները, ինչ բազմակողմ ծրագրերի, ցանցերի, լրացուցիչ միջոցառումների, ուսումնասիրությունների ու համեմատական հետազոտությունների նկատմամբ:

Այլ ծախսեր

Այլ ծախսերը փոխհատուցվում են՝ ելնելով իրական ծախսերից: Կիրառվում են նույն չափանիշները, ինչ բազմակողմ ծրագրերի, ցանցերի, լրացուցիչ միջոցառումների, ուսումնասիրությունների ու համեմատական հետազոտությունների նկատմամբ:
«Ժան Մոնե» ծրագրերում դասավանդման հետ կապված ծախսեր
Սովորաբար այս տեսակի ծախսերը վերաբերում են միայն «Ժան Մոնե» ամբիոններին, *Ad personam* «Ժան Մոնե» ամբիոնին ու մոդուլներին: Պատշաճ ու հիմնավորված դեպքերում, սակայն, Կատարելագործման կենտրոնների դիմումները նույնպես կարող են ներառել այդպիսի ծախսեր:

Դասավանդման ժամերի քանակը կախված է գործողության տեսակից: «Ժան Մոնե» ամբիոնների համար դասավանդման նվազագույն ժամաքանակը 120 է ակադեմիական տարվա համար: Մոդուլների համար դասավանդման նվազագույն ժամաքանակը 30 է ակադեմիական տարվա համար:

Դասավանդման առավելագույն ժամավճար է սահմանված 200 եվրո:

Եթե դասավանդման ժամավճարը գերազանցում է նշված առավելագույն դրույքաչափերը, ավելցուկն անթույլատրելի է համարվում: Այդ ծախսերի հավաստիությունը կարող է աուդիտի ենթարկվել:

5. ՑԿՅԱՆՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ցկյանս կրթության ծրագիրը 2007-13թթ. ապահովում է ծրագրի ներքո և դրա հետ կապված նախկին ծրագրերի շրջանակներում օժանդակվող ծրագրերի ու գործողություններ՝ «արդյունքների հրապարակում և կիրառում, ինչպես նաև լավագույն փորձի փոխանակում»: (Art 3.2 (d))

Հրապարակման այդ գործողություններին աջակցող միջոցառումներն են.

- Ոլորտային յուրաքանչյուր չորս ծրագրի շրջանակներում իրականացվող շատ ծրագրեր ու լեզուներին 2, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաներին 3 ուղղված գլխավոր գործողությունները (արդյունքների հրապարակում և կիրառում) անհրաժեշտ են հրապարակման ու կիրառման պլանը ներկայացնելու և իրագործելու համար:
- Ոլորտային յուրաքանչյուր չորս ծրագրի շրջանակներում իրականացվող լրացուցիչ միջոցառումներն ու գլխավոր գործողությունների լեզուները հնարավորություն են ընձեռում հաղորդակցության, տեղեկատվական ու կիրառման միջոցառումների, ինչպես նաև նմանատիպ ոլորտներում ընթացող ծրագրերի թեմատիկ մոնիտորինգի համար:
- Ծրագիրը նաև նախատեսում է «Տրանսվերսալ» ծրագրի ներքո «Արդյունքների հրապարակման ու կիրառման» համար նորարարական գլխավոր գործողություն 4-ի իրականացումը:

ՑԿԾ-ի Ուղեցույցի տվյալ մասը տալիս է ընդհանուր տեղեկություններ արդյունքների հրապարակման ու կիրառման վերաբերյալ, ինչպես նաև ապահովում առանձնահատուկ ուղեցույց ծրագրային համակարգողների համար, որոնք ցանկանում են դիմել ոլորտային ծրագրերի ու լեզուների 2 և տեղեկատվական տեխնոլոգիաների 3 գլխավոր գործողությունների ներքո օժանդակության համար: Դրանք պետք է կիրառվեն կոնկրետ գործողության վերաբերյալ խորհրդատվության հետ մեկտեղ:

5.Ա. Ի՞ՆՉ Է ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒՄԸ

«Արդյունքների հրապարակման ու կիրառման» համար նախատեսված փորձարարական Գլխավոր գործողություն 4-ի ներքո դիմումների վերաբերյալ տեղեկատվություն կարելի է գտնել Գլխավոր գործողություն 4 մասում:

Ո՞րն է արդյունքների հրապարակման ու կիրառման հիմնավորումը

Արդյունքների կանոնավոր հրապարակումն ու կիրառումն անչափ կարևոր են այս և նախորդ ԵՄ կրթության ու ուսուցման ծրագրերի ներքո իրականացված գործողությունների առավելագույն ազդեցությունն ապահովելու համար, որոնց նպատակն է՝ օժանդակել վերանայված «Լիսաբոնյան օրակարգի» և «Կրթություն և ուսուցում 2010» աշխատանքային ծրագրի կատարմանը:

Առավելությունների շարքում կարող են լինել.

- ծրագրերի արդյունքների կայունության ամրապնդումը՝ ելնելով վերջնական օգտագործողի կարիքներից
- գոյություն ունեցող փորձի կիրառում («նոր անիվ» չի հայտանգործվելու)
- ներդրումներից առավելագույն օգուտի քաղում
- արդյունքների փոխանցում, որի նպատակն է՝ համակարգերի ու փորձի փոփոխում, ըստ այդմ ամրապնդելով ԵՄ ֆինանսավորմամբ ծրագրերի ու համակարգային մակարդակում ծրագրերի ազդեցությունը
- քաղաքականության ու գործընթացային նորարարության խթանում
- քաղաքականության գործընթացի բարելավում (գործընկերային ուսուցում, համակարգման բաց մեթոդ):

Ի՞նչ է նշանակում «արդյունքների հրապարակում և կիրառում»

«Արդյունքների հրապարակում ու կիրառումը» վերաբերում է այն գործողություններին, որոնց նպատակն է՝ ապահովել ՑԿԾ-ի և նրա նախորդների արդյունքների պատշաճ ճանաչումը, ցուցադրումն ու լայնամասշտաբ իրականացումը:

ՑԿԾ-ի համատեքստում պետք է նշել հետևյալ առանձնահատկությունները.

- **Խթանում և գիտակցության ամրապնդում.** Այս եզրույթը նախևառաջ կիրառվում է գոյություն ունեցող ծրագրերի ու նախաձեռնությունների, դրանց նպատակների, հիմնախնդիրների ու գործողությունների, ինչպես նաև տվյալ նպատակների իրագործման համար ֆինանսավորման առկայության վերաբերյալ լուսաբանման համատեքստում: Այս սահմանումը բացառում է *արդյունքների* հրապարակումը: Խթանումն ու գիտակցության ամրապնդումը, որպես այդպիսիք, իրականացվում են, հատկապես, ծրագրերի կամ նախաձեռնությունների իրական իրականացումից առաջ և ընթացքում, DGEAC-ի կողմից՝ Կրթության, տեսալսողական ու մշակույթի գործադիր գործակալության, ինչպես նաև Ազգային գործակալությունների հետ համագործակցելով:
- **Տեղեկատվության տարածում.** Այն սահմանվում է գլխավոր դերակատարների համար ծրագրերի ու նախաձեռնությունների որակի, պատշաճության ու արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման պլանավորված գործընթաց: Այն տեղի է ունենում, երբ առկա են ծրագրերի ու նախաձեռնությունների արդյունքները: Այդ գործողությունը տեղի է ունենում նախագծային ու ծրագրային մակարդակներում և ենթադրում է «հաղորդակցման» միջնորդ մարմինների ակտիվ մասնակցությունը:
- **Կիրառումը** բաղկացած է **«գործնական կիրառումից» և «տարածումից»:** «Գործնական կիրառումը» ծրագրերի ու նախաձեռնությունների հաջող արդյունքների վերաբերյալ տեղական, տարածաշրջանային, ազգային կամ եվրոպական համակարգերում համապատասխան որոշում կայացնողներին տեղեկացնելու պլանավորված գործընթացն է: «Տարածումը» վերջնական օգտագործողներին ծրագրերի նախաձեռնությունների արդյունքների որդեգրման և / կամ կիրառման վերաբերյալ համոզելու պլանավորված գործընթացն է:[23] Դարձյալ դա կարող է տեղի ունենալ նախագծային ու ծրագրային մակարդակներում:

Այսպիսով, «տեղեկատվության տարածումն» ու «կիրառումը» տարբեր հայեցակարգեր են, բայց սերտորեն կապված են մեկը մյուսի հետ:

Արդյունքների հաջող իրականացումը պայմանավորված է.

- ծրագրերի ու նախագծերի/ նախաձեռնությունների համապատասխան արդյունքների ապահովմամբ, որի նպատակն է՝ բավարարել ապահովողների, քաղաքականություն մշակողների և ի վերջո հասարակության պահանջները:
- տեղեկատվության արդյունավետ տարածման ու կիրառման միջոցով երաշխավորելով, որ նման արդյունքները կհասնեն թիրախային համապատասխան լսարանին այնպիսի ձևով ու այն ժամանակ, որ նրանք կշահեն դրանցից:

Արդյո՞ք դա նույնն է, ինչ «valorization» եզրույթը

Այո: «Valorisation»-ը «արդյունքների հրապարակման ու կիրառման» եզրույթի ֆրանսերեն համարժեքն է: Երբեմն անգլերեն ԵՄ Ցկյանս կրթության ծրագրի և նրա նախորդների համատեքստում այդ երկու եզրույթները կիրառվում են համարժեքորեն:

Ի՞նչ են իրենցից ներկայացնում արդյունքները

«Ծրագրերի ու նախաձեռնությունների արդյունքներ» արտահայտությունն իր մեջ ներառում է առանձին ծրագրերի, միջոցառումների, գործողությունների, շարժունության ժամանակահատվածների և այլն արդյունքները: Դրանք կարող են դասակարգվել ըստ հինգ գլխավոր տեսակների՝ արդյունքներ, մեթոդներ, փորձառություն, քաղաքականության դասեր և եվրոպական համագործակցություն:

Ծրագրային ու նախագծային արդյունքների ու դրանց հետ առնչվող գործողությունների հրապարակման ու կիրառման համար Գլխավոր տնօրենության EAC-ի ռազմավարության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ու կարելի է գտնել հետևյալ հասցեով Գլխավոր տնօրինության «Հրապարակում և կիրառում» կայք էջում՝
http://ec.europa.eu/dgs/education_culture/valorisation/index_en.html

Ում համար է նախատեսված տեղեկատվությունը

[23] «Գործնական կիրառումը» և «բազմապատկում» սահմանումները վերցված են *«Ծրագրային աջակիցների ներգործության հասնելու վերաբերյալ ուղեցույցից»*, ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ համայնքի նախաձեռնություն, Զբաղվածության և հասարակական գործերի ԳՏ (1997թ.):

- Ոլորտային ծրագրերի ներքո բազմակողմ ծրագրերի համար դիմողները պետք է իրենց դիմումին կցեն տեղակատվության տարածման ու կիրառման մանրակրկիտ պլան:
- Ոլորտային ու «տրանսվերսալ» ծրագրերի այլ գործողությունների ներքո ֆինանսավորման համար դիմողները պետք է հավաստիանան, արդյոք չկան առանձնահատուկ պահանջներ տեղեկատվության տարածման ու կիրառման գործողությունների ու պլանների վերաբերյալ: Ընդհանուր ցուցումներն ու «ստուգացանկն» ամեն դեպքում կարող են օգտակար լինել դիմողների համար ՑԿԾ-ի ցանկացած մասում ծրագրային արդյունքների ու ազդեցության վրա ավելի շատ ուշադրություն դարձնելու համար:

Կարևոր տեղեկատվություն որակի վերաբերյալ տեղակատվության տարածման ու կիրառման պլանի մշակման համար

Բազմակողմ ծրագրերի համար բոլոր դիմումներին պետք է կցված լինի տեղեկատվության տարածման ու կիրառման պարզ, մանրակրկիտ ու հաշվարկված պլան: Դա առաջարկները գնահատելու կարևոր պայմաններից մեկն է: Հետևաբար, ցանկալի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման ու կիրառման վատ մշակված ռազմավարությունը բացասական ազդեցություն կունենա առաջարկի ընտրվելու հնարավորությունների վրա:

Տեղեկատվության տարածման ու կիրառման լավ մշակված պլանը պետք է, հատկապես, պետք է ապահովի հետևյալը.

- Օգտագործողների կարիքների նկատմամբ հստակ ու դինամիկ մոտեցում. առաջարկները պետք է հիմնված լինեն թիրախային խմբերի կարիքների վերլուծության, ինչպես նաև այդ կարիքների բավարարման համար առաջարկված արդյունքների հստակ ու լավ հիմնավորված ներկայացման վրա: Տեղեկատվության տարածման ու կիրառման պլանը պետք է մանրամասն նկարագրի, թե ինչպես է այդ վերլուծությունն ուսումնասիրվելու և արդիականացվելու ծրագրի իրագործման ժամանակահատվածում, որպեսզի արդյունքները շարունակեն համապատասխանել վերջնական թիրախային օգտագործողների պահանջներին: Պլանը պետք է մատնանշի այն գործողությունները, որոնք ուղղված են արդյունքներով հետաքրքված ավելի լայն թիրախային խմբեր գտնելուն, ինչպես նաև այն միջոցառումները, որոնք նպատակ ունեն, հնարավորության դեպքում, գրավել այդ ավելի լայն խմբերին ու բավարարել նրանց կարիքները:
- Բոլոր գործընկերների միջև պատասխանատվության բաշխումը. Ողջ գործընկերությունը պատասխանատվություն է կրում արդյունքների հարապարակման ու կիրառման համար, որպես այդ արդյունքները տնօրինող: Ուստի ծրագրային բոլոր գործընկերները պետք է ակտիվ մասնակցություն ունենան իրագործման պլանում նշված միջոցառումների իրականացման գործում: Արդյունքների իրագործումը չպետք է դիտարկվի որպես այն գործընկերների բացառիկ պաշար, ովքեր տրամադրում են շուկայագիտության առանձնահատուկ փորձագիտություն և հրապարակման հնարավորություն: Պլանը պետք է հստակորեն սահմանի ծրագրի ընթացքում յուրաքանչյուր գործընկերոջ առանձնահատուկ առաջադրանքը՝ նրանց բնորոշ հետաքրքրություններից ու փորձագիտությունից ելնելով:
- Շարունակական գործընթաց. Արդյունքների հրապարակմանն ու կիրառմանն ուղղված գործողությունները պետք է մշակվեն ու նախագծվեն ծրագրային առաջարկի մեկնարկից ի վեր, օրինակ՝ որպես առաջարկի կառուցվածքը զարգացնելու ու փորձարկելու գործիք, և շարունակվեն ծրագրի ողջ ընթացքում, որի նպատակն է՝ ապահովել, որպեսզի վերջնական արդյունքները լինեն հնարավորինս համապատասխան, կիրառելի, տեսանելի ու մատչելի:
- Կյանքը ծրագրի ավարտից հետո. Տեղեկատվության տարածման ու կիրառման պլանները պետք է ներառեն այնպիսի գործողություններ, որոնք կապահովեն շարունակական տեսանելիություն, մատչելիություն և արդյունքների կիրառում ծրագրի ավարտից հետո, կերաշխավորեն առավելագույն ներգործություն ու կայունություն:

5.Բ. ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ

Ստուգացանկ ծրագրի դիմողների համար

- *Կարիքների վերլուծություն*
- Արդյո՞ք ծրագիրը ներառում է այն կարիքների բավարար վերլուծությունը, որոնք պետք է վերջինս բավարարի: Ծրագրի արդյունքների ապագա և հնարավոր կիրառողների/ շահառուների խորհրդատվությունը խիստ կարևոր է այս փուլում:
- Արդյո՞ք ծրագիրը ներառում է գործողության իրականացման ոլորտում տիրող իրավիճակի ճշգրիտ վերլուծություն: Դա կարևոր է ծրագրի հավելյալ արժեքը ցույց տալու համար, ինչպես նաև ավելորդաբանությունից խուսափելու համար. «SWOT»[24] վերլուծությունն այս փուլում կարող է օգտակար լինել:
- Արդյո՞ք նախագծման և մշակման փուլերում, ինչպես նաև ծրագրի իրականացման ժամանակահատվածում հաշվի են առնվել վերջնական շահառուների ու հնարավոր կիրառողների կարիքները: Արդյո՞ք նրանք ծրագրի մեկնարկից ի վեր տեղեկացված ու գործողություններում ներգրավված են եղել:
- *Գործընկերություն/ Միավորում*

- Ծրագիրն ապահովու՞մ է կայուն Գործընկերություն/ Միավորում: Գործընկերությունը/ Միավորումը հիմնվա՞ծ է գոյություն ունեցող/ նախկինում ունեցած համագործակցության վրա: Գործընկերների միջին և/ կամ երկարաժամկետ համագործակցության մա՞ս է կազմում: Նոր գործընկերները, հատկապես, ինչու՞մ են ներգրավված. արդյո՞ք ծրագիրը ներառում է առանձնահատուկ գործողություններ, որոնց նպատակն է՝ զարգացնել ու ամրապնդել համատեղ աշխատանքը:
- Գործընկերությունը/ Միավորումը կապեր (անմիջական կամ հաղորդակցման վստահելի միջոցների ու ցանցերի միջոցով) ապահովու՞մ ծրագրի թիրախային ոլորտներում ամենակարևոր որոշում կայացնողների/ շահառուների ու մասնագետների հետ:
- Գործընկերության/ Միավորման մեջ մտնու՞մ են կազմակերպություններ, որոնք ենթադրվում է, որ ծրագրային արդյունքները կներառեն կրթության, մասնագիտական կրթության, մշակույթի կամ երիտասարդության համակարգերում/ փորձառության մեջ՝ ազգային, տարածաշրջանային և/ կամ ոլորտային մակարդակներում:
- Ծրագրի գործընկերները կարո՞ղ են իրենց ունակություններն ու պատրաստակամությունը ներդնել, որպեսզի ծրագրի ավարտից հետո հետամուտ լինեն արդյունքների իրագործմանը (այսինքն՝ արդիականացման, իրականացման, շարունակական հրապարակման, փոխանցման, հետագա գործողություններ և այլն):
- Գործընկերներն ունե՞ն մասնագիտական փորձ հրապարակման/ տպագրման/ հաղորդակցման/ շուկայագիտության ոլորտներում:
- Գործընկերների միջև մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ համաձայնագիր կնքվել է:

Նման համաձայնագրի առկայությունը պարտադիր չէ, բայց կարող է օգտակար լինել: Բոլոր դեպքերում այն չպետք է արգելի արդյունքի կիրառումը երրորդ անձի կողմից՝ միևնույն ժամանակ չոտնահարելով արտադրանքը վաճառելու իրավունքը

Հրապարակման ու կիրառման գործողություններ

Հրապարակում ու կիրառման գործողությունները ծրագրի ողջ ընթացքում շարունակական գործընթաց հանդիսանու՞մ են:

[24] SWOT = առավելություններ, թերություններ, հնարավորություններ, վտանգներ (ծրագրի, գործընկերների ու արտաքին պայմանների հետ կապված առավելությունների, թերությունների, հնարավորությունների, վտանգների գիտակցման լույսի ներքո պլանավորման գործողություններ):

Հրապարակման ու կիրառման գործողությունները պետք է սկսվեն ծրագրի մեկնարկից ի վեր և շարունակվեն իրականացման ողջ ժամանակահատվածում, ինչպես նաև համաձայնագրի ավարտից հետո, այսպիսով. նպաստելով ծրագրի արդյունքների ավելի երկարատև ներգործությանն ու կայունությանը:

- Հրապարակման ու կիրառման գործողությունները մանրամասն, հստակ ու հաշվարկվա՞ծ են: Օրինակներ՝ հրապարակման ու կիրառման գործողությունների թիրախում գտնվող և դրանցից շահող մարդկանց թիվը, հրապարակման ու կիրառման համար նախատեսված բյուջեի տոկոսադրույքը, հրապարակման/ կիրառման ցանկացած այլ գործողություն, երկար ժամանակահատվածում հրապարակման ու կիրառման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ գիտական հոդվածները, համաժողովները, ինտերնետային կայք էջերը, արտադրանքները, երկարատև օգտագործողների հետ համաձայնագրերը, և կարճ ժամանակահատվածում՝ լրատվության միջոցները, սեմինարները, համաժողովները, ցուցահանդեսները, արդյունքի հնարավոր օգտագործողների/ շահառուների հետ նախատիպերի փորձարկումը:

- Հրապարակման ու կիրառման գործողությունները ծրագրի նպատակներին ու շահառուներին համապատասխանեցվել ու համահու՞նչ են: Հրապարակման հնարավորությունները համապատասխանու՞մ են թիրախային խմբին:
- Հրապարակման ու կիրառման գործողությունները կազմակերպվու՞մ են տարբեր մակարդակներում (այսինքն՝ տեղական, տարածաշրջանային, ազգային, եվրոպական ու ոլորտային մակարդակներում) արդյունավետ հաղորդակցության միջոցով, ինչպես (անդրազգային) ցանցերը:
- Ծրագրի բոլոր գործընկերները հրապարակման ու կիրառման համար պատասխանատու՞ են: Եթե՝ ոչ, ինչու՞: Գործընկերների դերերը հստակորեն սահմանվա՞ծ են, իսկ առաջադրանքները հստակ ու պատշաճ կերպով բաշխվա՞ծ են:
- Ծրագրի գործընկերների ու արդյունքների հայտնի ու հնարավոր վերջնական օգտագործողների/ շահառուների միջև շարունակական հաղորդակցություն կա՞: Ծրագրի անմիջական շահառուներն այն խմբերն են, որոնց անմիջականորեն ուղղված են ծրագրի արդյունքները, սակայն հրապարակման ու կիրառման գործողություններ պետք է իրականացվեն նաև <u>հնարավոր</u> օգտագործողների/ շահառուների, քաղաքական որոշում կայացնողների և/ կամ ծրագրի գործունեության ոլորտում գլխավոր դերակատարների ավելի լայն խմբի համար:
- Արդյունքների վերջնական օգտագործողներն ու հնարավոր շահառուներն անմիջականորեն ներգրավվա՞ծ են ծրագրի տարբեր փուլերում, և արդյո՞ք ծրագրի ընթացքում նրանց հետ կանոնավոր կերպով խորհրդակցում են: Նրանց խորհուրդներն ու պահանջները կարևոր են անմիջապես կիրառելի, որակյալ արդյունք ստանալու տեսանկյունից, որը կունենա ավելի լուրջ ազդեցություն: Օգտագործողները կարող են ներգրավվել տարբեր փուլերում, օրինակ՝ պահանջների սահմանման ու վերանայման, նախատիպերի փորձարկման, ինչպես նաև միջանկյալ ու վերջնական արդյունքների գնահատման գործում: Ներգրավումը կարևոր է արդյունքների համապատասխանեցման ու ծրագրային որոշակի գործողությունների հավանական ձևափոխման համար: Վերջնական օգտագործողներն ու շահառուները կարող են ներգրավվել գործընկերների պաշտոնական համաձայնագրի միջոցով, որպես լուռ գործընկերներ, ծրագրի կառավարման հանձնաժողովի կամ կիզակետային խմբի անդամներ և այլն:
- Ծրագիրը ներառու՞մ է, օրինակ, արդյունքի փորձարկման փուլ նախքան վերջնական շահառուների/ օգտագործողներին հանձնելը: Փորձարկման արդյունքները պետք է հաշվի առնվեն արդյունքը հարմարեցնելիս ու վերջնական տեսքի բերելիս:

<u>Հետագա քայլեր</u>

- Ի՞նչ է տեղի ունեում, երբ ծրագիրն ավարտվում է: Ծրագրի ավարտից հետո արդյունքների արդիականացում նախատեսվա՞ծ է: Ծրագրի ավարտից հետո ինչպե՞ս է ապահովվելու արդյունքների մատչելիությունը:

• Ի՞նչ ֆինանսավորմամբ է անհրաժեշտ արդիականացումն իրականացվելու: Եթե արդյունքը պահանջում է սպառողի կողմից աջակցության որոշակի տարրեր, ինչպե՞ս է ծառայությունը մատուցվելու: Արդյո՞ք անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկվել են ծրագրի արդյունքներն այլ, հնարավոր է, հետաքրքված անձնանց ու կազմակերպություններին փոխանցելու համար, և, հատկապես, որոշում կայացնողներին ու գլխավոր շահառուներին:
• Նպատակի կատարյալ իրագործումը նշանակում է արդյունքները համակարգերի ու իրականության մեջ մտցնելը, օրինակ՝ ուսուցման/ կրթական գործիքների դեպքում, դրանց ճանաչելը/ վկայագրելը: Հետևաբար, արդյունքների կայունության համար կարևոր է քաղաքականության մշակման մակարդակում ներգրավելը:
• Կիրառման համար ծրագրի կողմից մշակված արդյունքների ու մեթոդների փոխանցումն այլ կազմակերպություններում նույնպես անչափ կարևոր է: Դրանց տարածումը խորհուրդ է տրվում իրականացնել, հատկապես, ծրագրի գործընկերների կամ համապատասխան որակավորում ունեցող այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացների միջոցով:
• Կարո՞ղ են, արդյոք, ակնկալվող արդյունքները (արտադրանքներ ու գործընթացներ) փոխանցվել կամ կիրառվել այլ ոլորտներում/ թիրախային խմբերում/ հասարակական ու մշակութային միջավայրերում: Կարելի է բարելավել արդյունքների փոխանցելիությունը:
• Օրինակներ. տեխնիկական տեսանկյունից դյուրին օգտագործման արտադրանք. արտադրանքը ներառում է ծրագրի ավարտից հետո պահպանման ու հետագա քայլերի վերաբերյալ պլաններ, վերապատրաստման նոր մոտեցումներ բերող գործընթաց, ներկա պահին չընդգրկված թիրախային խմբին ուղղված արդյունքներ, բովանդակությամբ ու/ կամ տեխնիկապես հեշտությամբ հարմարեցվող արտադրանք, եվրոպական մասշտաբի խնդիրներ լուծող գործընթացներ, մի քանի լեզուներով արդյունքների առկայություն և այլն:

5.Գ. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդյունքները կարելի դասակարգել հինգ գլխավոր խմբերի, որոնցից առաջին երեքը ծրագրային անմիջական արդյունքներ են, իսկ հաջորդ երկուսը՝ ծրագրային անուղղակի արդյունքներ և/ կամ նախագծերի ու նախաձեռնությունների արդյունքներ:

1) «*Արտադրանքները*» շոշափելի ու դիմացկուն արդյունքներ են՝ կրթական նոր արդյունքների, ուսումնական նոր ծրագրերի, նոր որակավորումների, տեսանյութերի տեսքով: Դրանց շարքում են.
• հաշվետվություններն ու (համեմատական) ուսումնասիրությունները,
• ավանդական կրթության ու ուսուցման մոդուլները, ինչպես դասագրքերն ու ուսուցման այլ գործիքները,
• նորարարական կրթության ուսուցման մոդուլները,
• նոր ուսումնական ծրագրերն ու որակավորումները,
• նոր մոտեցումների ու մեթոդների վերաբերյալ ուղեցույցերը,
• կրթության ու ուսուցման ինտերնետային նյութերը (էլեկտրոնային ուսուցում),
• միջոցառումները, ինչպիսիք են համաժողովները, մշակութային միջոցառումները, երիտասարդության հավաքները, հասարակության գիտակցության ամրապնդման նպատակով քարոզարշավները, գործնական հանդիպումները, բանավեճերն ու սիմպոզիումները:

2) *«Մեթոդները» ներառում են.*

- տվյալ ոլորտի ու թեմայի շրջանակներում մասնակիցների գիտելիքների ամրապնդում,
- համագործակցության գործընթացներն ու մեթոդներ,
- յուրացված կառավարման դասեր ու հմտություններ,
- մտքերի ու լավագույն փորձի փոխանակում:

3) «*Փորձառությունը*» ոչ շոշափելի ու ոչ այնքան ճկուն է, որքան արտադրանքներն ու մեթոդները: Դրա տակ հասկանում ենք.

- կառավարման ու (վերազգային) գործընկերության մեջ ծրագրային գործընկերների ձեռք բերած փորձը,
- անհատների կողմից ձեռք բերած փորձառությունը, օրինակ՝ ՑԿՕ-ի ոլորտային նախագծերի շրջանակներում շարժունության ժամանակահատվածում ձեռք բերած փորձը,

- ցանցերի ստեղծման միջոցով, հատկապես, ՑԿՕ-ի կենտրոնացված գործողությունների ներքո փորձառության ու լավագույն փորձի փոխանակումը,
- ՑԿՕ-ի ոլորտային նախագծերի շրջանակում գործնական «Գործընկերություն» տեսակի ծրագրերից ձեռք բերված փորձը և այլն:

4) «Քաղաքականության դասերը» սովորաբար քաղվում են նախագծի կամ նախաձեռնության (կամ մի խումբ նախաձեռնությունների կամ նախագծերի) շրջանակներում իրականացվող ծրագրերի ընդհանուր փորձից կամ առանձնահատուկ ծրագրերից, որոնք հատկապես նորարարական են կամ արդյունավետ: Դրանք առավել հաճախ կիրառվում են «համակարգային» մակարդակում՝ տարածող գործակալների կողմից: Քաղաքականության դասերի քաղումը դժվար թե ծրագրային համակարգողների (և գործընկերների) գլխավոր խնդիրը կամ ԵՄ ծրագրում կամ նախաձեռնությանը մասնակցելու գլխավոր պատճառը հանդիսանա, սակայն դրանցից որոշը, այնուամենայնիվ, կարող են սերտորեն առնչվել այդ նպատակի հետ:
5) «Եվրոպական համագործակցությունը» մասամբ հանդիսանում է եվրոպական գործընկերների հետ համագործակցության առավելությունների վերաբերյալ գիտակցության ամրապնդման, ինչպես նաև ԵՄ մակարդակում գործողությունների թափանցիկությունը բարելավելու միջոց: Այն ներառում է.

- նոր կամ ընդլայնված եվրոպական գործընկերություններ.
- լավագույն փորձի անդրազգային փոխանակում.
- միջմշակութային երկխոսություն և համագործակցություն, միջմշակութային ունակությունների զարգացում.
- որոշակի հանգամանքներում, ԵՄ ու ոչ ԵՄ անդամ պետությունների միջև նոր երկխոսություն և գործընկերություններ:

5.Դ. ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական տարվա ընթացքում «Հանձնաժողովի ընթացակարգի» (կենտրոնացված գործողություններ) ներքո տրամադրված դրամաշնորհները պետք է հրատարակվեն ԵՄ հաստատությունների ինտերնետային կայքում բյուջետային այն տարվա ավարտին հաջորդող տարվա առաջին կեսի ընթացքում, որի համաձայն դրամաշնորհը տրամադրվել է: Այդ տեղակտվությունը կարող է նաև հրատարակվել օգտագործելով ցանկացած այլ հարմար միջոց, այդ թվում՝ ԵՄ պաշտոնական ամսագիրը: Այնուամենայնիվ, դրամաշնորհներ ստացած անձանց անունները չեն հրապարակվի պաշտոնական ամսագրում կամ Եվրոպա կայք էջում:
Իրավաբանական անձանց համար, որոնց դրամաշնորհ է տրամադրվել.
ա) կհրապարակվի հետևյալ տեղեկատվությունը[25].

- շահառուի անունն ու հասցեն,
- դրամաշնորհի թեման,
- կրամադրված գումարն ու ֆինանսավորման դրույքաչափը,
- գործընկեր կազմակերպությունների ցանկը

բ) հրատարակված բոլոր նյութերում նրանք պետք է հստակորեն նշեն ԵՄ ներդրումը կամ գործողությունների հետ առնչությունը, որի համար օգտագործվել է դրամաշնորհը: Դեռ ավելին, պարտադիր է նրանց կողմից հրատարակված բոլոր նյութերի, պաստառների, համաֆինանսավորմամբ իրականացված նախագծերի և այլ արտադրանքների վրա ունենալ Եվրոպական Հանձնաժողովի անունն ու խորհրդանիշը: Ի վերջո, նրանք պետք է հրապարակեն մերժումը, որի համաձայն, բովանդակության համար պատասխանատվություն է կրում միավորումը և ոչ թե Եվրոպական Հանձնաժողովը կամ նրա գործակալությունները:

թույլ է տալիս տպագրել վերոհիշյալ տեղեկատվությունը, եթե դրամաշնորհային դիմումը հաստատվում է: Այնուամենայնիվ, շահառուն կարող է խնդրել իրեն ազատել այդ պայմանից, եթե հրատարակումը կարող է վտանգել իր անվտանգությունը կամ ֆինանսական շահերը:

Եթե այդ պահանջը լիարժեք չի բավարարվում, շահառուի դրամաշնորհը կնվազեցվի:

գ) պահանջվում է, որ նրանք կայք էջում տեղադրեն գործողության նկարագիրը և նրա միջանկյալ ու վերջնական արդյունքները, որոնք կպահպանջվեն ծրագրի ընթացքում և/ կամ Եվրոպական Հանձնաժողովի կողմից օժանդակվող տեղեկատվական ծրագրերում, որոնց նպատակն է՝ ծրագրի ավարտից հետո որոշակի ժամանակահատվածում նախագծի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը (EVE, ADAM և այլն): Գործողության սկզբում կայք էջի տվյալները պետք է հաղորդվեն համապատասխան Գործակալությանը և հաստատվեն Վերջնական հաշվետվության մեջ:

5.Ե. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դրամաշնորհային դիմումը կքննվի համակարգչի կողմից: Բոլոր անձնական տվյալները (օրինակ՝ անուններ, հասցեներ, կենսագրություններ և այլն) կքննվեն ԵՄ հաստատությունների ու մարմինների կողմից անձնական տվյալների ուսումնասիրման հետ կապված անհատների պաշտպանության ու այդ տվայլների ազատ տեղաշարժի վերաբերյալ Եվրոպական խորհրդաժողովի No 45/2001 հրամանի (ԵՀ) և 2000թ. դեկտեմբերի 18-ի Խորհրդի հրամանի համաձայն[26]: Դրամաշնորհային դիմումների գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, որը տրամադրվում է դիմողների կողմից, կքննվի տվյալ նախագծի համար պատասխանատու բաժնի կողմից՝ միմիայն այդ նպատակով: Դիմողի խնդրանքով, անձնական տվյալները կարող են ուղարկվել դիմողին շտկման կամ լրացման նպատակով: Այդ տվյալների վերաբերյալ ցանկացած հարց պետք է ուղղվի համապատասխան Գործակալությանը, որին պետք է դիմումաձևը վերադարձվի: Շահառուները կարող են ցանկացած ժամանակ բողոք ներկայացնել Տվյալների պաշտպանության եվրոպական ղեկավարին իրենց անձնական տվյալների քննման համար հետևյալ հասցեով. http://www.edps.europa.eu/EDPSWEB/.

Արդյունքների հրապարակման ու կիրառման EAC-ի Գլխավոր Տնօրինության ռազմավարության վերաբերյալ առավել ընդհանրական տեղեկատվություն ու ցուցումներ կարելի է գտնել հետևյալ կայք էջում.

http://ec.europa.eu/dgs/education_culture/valorisation/index_en.html